

ՆԵՐԿԱՅ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՀԱՍԻՉԷԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳ ԴԻ ՄԴԱՌՆԱՐ

Հասիչէի մէջ օրեր առաջ ՏԱՐԵՇ մեծ պայթում մը իրագործեց, Ղուեյրան թաղամասի «Սինաս» բանտին մէջ, ուր ձերբակալուած էին ՏԱՐԵՇ-ի հազարաւոր զինեալներ, որուն հետեւանքով բանտարկեալներէն մաս մը փախուստ տուաւ բանտէն ապաստանելով շրջանի տեղացիներուն բնակարանները եւ սպառնալով անոնց, ինչպէս նաեւ յարակից ենթակառոյցներու մէջ: ՏԱՐԵՇի բանտարկեալներէն մաս մըն ալ գրաւեց բանտը:

Միւս կողմէ, տեղւոյն ԶԱՍԱՏ-ի ուժերը պաշարեցին Ղուեյրան թաղամասն ու բանտին շրջակայքը, փորձելով վերագրաւել բանտը եւ հալածել փախուստ տուած բանտարկեալները: ԱՄՆ օդանաւերը եւս օրերէ ի վեր կը ձմբակոծեն բանտն ու անոր շրջակայքը:

Բումն բախումներ տեղի կ'ունենան ԶԱՍԱՏ-ի եւ ՏԱՐԵՇ-ի զինեալներուն միջեւ:

Հասիչէի եկեղեցւոյ թաղական խորհուրդի ատենապետ Արմէն Նալպանտեան «Գանձասար»-ին ներկայացնելով կացութիւնը յայտնեց, որ քաղաքին մէջ երթեւեկութիւնը արգիլուած է, ամէն տեղ փակ է:

Հայերու բնակարանները հեռու են բախումնային շրջանէն եւ առայժմ ապահով վիճակի մէջ են: Նալպանտեան կապ հաստատած է տեղւոյն ընտանիքներուն հետ, որպէսզի որեւէ օգնութեան կարիք ըլլալու պարագային միջոցներ ձեռնարկուին:



Անոր համաձայն, ակումբը, դպրոցն ու եկեղեցին մինչեւ օրս ապահով վիճակի մէջ են, սակայն քաղաքի ներկայ կացութիւնը խիստ մտահոգիչ է:

Նալպանտեան կապ հաստատած է նաեւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Չօպուեանի հետ, ներկայացնելով կացութիւնը:

ՍԱՆԱ լրատու գործակալութեան համաձայն Ղուեյրան եւ Չիուր թաղամասերէն շուրջ 2600 տեղացի ընտանիքներ լքած են իրենց բնակարանները՝ ուղղուելով քաղաքի կեդրոնը: Սուրիական բանակը ապահով միջանցքներ բացած է անոնց դիմաց եւ Սուրիական Կարմիր Մահիկ Կազմակերպութեան օգնութեամբ ժամանակաւոր, ապահով կացարաններ, դէղորայք եւ սնունդ կ'ապահովէ տեղահանուածներուն:

Յիշենք, որ 20 Յունուարին ՏԱՐԵՇ-ի զինեալներ երկու ականապատուած մեքենաներ պայթեցուցին Հասիչէի Ղուեյրան թաղամասի «Սինաս» բանտին հարաւային մուտքին: Բանտը կը գտնուէր ԶԱՍԱՏ-ի վերահսկողութեան տակ:

ԱԼԻԷ. «ԱՆԳԵՉՈՒՐԻ ՄԻՋԱՆՃ»-Ի ՍՏԵՂՇՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԻՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴՐԱԿԱՆ ԼՈՒԻԵՐ ԿԸ ՍՏԱՆԱՆԵ՛»

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ յայտարարած է, որ երկուշաբթի օր ծանօթացած է այսպէս կոչուած՝ «Անգեչուրի միջանցք»-ի ստեղծման հարցով աշխատանքներուն:



Անոր համաձայն, արդէն յաջողութեամբ թէ՛ ինքնաշարժային, թէ՛ երկաթուղային ճամբաներ կը կառուցուին:

Ատրպէյճանական «Մինվալ» կայքը կը հաղորդէ, որ այս մասին Ալիեւ յայտարարած է Իրանի ճամբաներու եւ քաղաքաշինութեան նախարար եւ ատրպէյճանական-իրանեան տնտեսական գործակցութեան միացեալ յանձնախումբի համանախագահ Ռուսթամ Զասիմի հետ տեսակցապով տեղի ունեցած հանդիպումին ընթացքին:

«Մենք դրական լուրեր կը ստանանք Հայաստանէն: Հայաստան իր կողմէն կը նախատեսէ մեկնարկ տալ այդ աշխատանքներուն: Յոյսով եմ, որ յետպատերազմեան ժամանակաշրջանը նոր կարելիութիւններ պիտի բանայ ամբողջ շրջանին համար: Անշուշտ, Իրանի այդ աշխատանքներուն մէջ ներդրումը շատ նշանակալի է», ըսած է Ալիեւ:

ՀՀ ՆԱԽԱԳԱԶԸ ԻՐ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅ

23 Յունուարի երեկոյեան, ՀՀ նախագահը դիմատետրի իր էջին վրայ կատարած յայտարարութեամբ նախագահի պաշտօնէն իր հրաժարակաւոր ներկայացուց:

«1990-ականներու սկիզբը աշխարհաքաղաքական մեծ փոփոխութիւններուն հետեւանքով մեր ժողովուրդին մեծագոյն կարելիութիւն ընձեռուեցաւ ստեղծելու իր անկախ պետութիւնը: Մեր առաքելութիւնը ոչ թէ մէկ դրօշը ուրիշով մը փոխարինելն էր, այլ՝ կառուցել երկիր, որ դարեր անց վերստին կ'ապահովէ հայերուն անվտանգութիւնը, յառաջընթացը եւ բարգաւաճումը: Կ'ընդգծեմ՝ անկախ պետութեան գոյութեան հիմնական իմաստը պատասխանատուութիւն ստանձնելու ու կրելու կարողութիւնն է, երբ կը գիտակցինք, որ միայն մենք ենք, որպէս մէկ միասնական մարմին, սեփական յաղթանակներ կերտողը եւ սեփական պարտութիւններուն մեղաւորը:



Նման պատմական կարելիութեամբ ոգեւորուած՝ ես, ինչպէս եւ իմ շատ հայրենակիցներ, նուիրուեցայ այդ առաքելութեան: Տարբեր պատճառներով այս կամ այն փուլերուն իմ մասնակցութեան աշխուժութիւնը փոխուած էր, բայց ես չէի դադարած հաւատալ մեր վերջնական համագապին յաջողութեան: Եւ ատիկա էր Հայաստանի նախագահի պաշտօնը ստանձնելու առաջարկութեան համաձայնելու իմ գլխաւոր շարժառիթը: Ընդունելով այդ կարեւոր որոշումը՝ ես մեկնելով ինձի ուղղուած առաջարկութեան, որուն համաձայն՝ նախագահական նոր հիմնարկը պիտի ունենար գործիքներ եւ կարելիութիւններ՝ ազդելու արտաքին քաղաքական եւ տնտեսական, ներդրումային քաղաքականութեան վրայ, Սփիւռքի հետ յարաբերութիւններուն վրայ, ինչպէս նաեւ միջազգային ասպարեզի մէջ համագապին շահերը յառաջ մղելու եւ նոր գիտակրթական ու բարձր ճարտարագիտական միջավայր ձեւաւորելու: Որոշ ժամանակ անց տեղի ունեցան 2018-ի Ապրիլ-Մայիսեան իրադարձութիւնները... Կրկին հարց ծագիլ՝ ինչո՞ւ ես հրաժարական չտուի այդ պահուն: Պատասխանը ակնյայտ է՝ այն պատասխանատուութեան պատճառով, որ ես կրած էի՝ ստանձնելով Հանրապետութեան նախագահի պաշտօնը:

Ես պարտաւոր էի ընել ինձմէ կախեալ ամէն ինչ՝ բացառելու ներքին պառակտումի հետագայ խորացումը, կարելի բախումները, որոնք կրկին հանգեցնէ չափազանց բացասական հետեւանքներու: Ես նաեւ կը ճղգտէի իմ երկարամեայ աշխատանքին շնորհիւ ձեռք բերած հեղինակութիւնը, կապերը եւ իմ միջազգային քաղաքական ու տնտեսական ներուժը ծառայեցնել ուժեղ եւ կայուն պետականութեան կառուցումին: Կրկին կրկին հարց յառաջանալ, թէ ինչո՞ւ նախագահը չկրցաւ ազդել քաղաքական իրադարձութիւններուն վրայ, որոնք մեզի հասցուցած են ներկայ համագապին ճղգնաժամին: Պատճառը կրկին ակնյայտ է՝ համապատասխան գործիքներու պակասը, գործիքներ, որոնցմով որեւէ պետական պաշտօնեան կ'օժտէ բացառապէս մէկ փաստաթուղթ՝ Սահմանադրութիւնը:

Գործող Հիմնական օրենքին մէջ թաքնուած են մեր որոշ կարեւոր հարցերուն արմատները: Մենք ունինք հակադրող իրավիճակ, երբ նախագահը ստիպուած է պետականութեան երաշխաւոր ըլլալ՝ փաստացիօրէն չունենալով որեւէ իրական գործիք: Սահմանադրութիւնը նաեւ կ'ենթադրէ մէկ հիմնարկի գերակայութիւն միւսին նկատմամբ, Սփիւռքի յայտնի մասնագետներուն համար ստեղծած է խոչընդոտներ՝ պատմական Հայրենիքի պետական հիմնարկներու կառավարման մասնակցելու համար՝ այլն:

Մենք խորհրդարանական հանրապետութիւն ենք ձեւով, բայց ոչ բովանդակութեամբ: Իմ առաջարկութեանս իմաստը եւ նպատակը եղած է ոչ թէ կառավարման մէկ ձեւէն միւսին (խորհրդարանականէն կիսանախագահականի կամ նախագահականի) անցնիլը, այլ՝ զսպումներու եւ հակակշիռներու վրայ հիմնուած պետական համակարգ ստեղծելը: Առանց անոր դժուար է խօսիլ նշանակալից ձեռքբերումներու մասին, որովհետեւ յառաջընթացի եւ յաջողութեան կարելի է հասնիլ միայն կանխատեսելի եւ ներդաշնակ համակարգի պայմաններու տակ:

Ուրախ եմ, որ ստեղծուած է սահմանադրական փոփոխութիւններու յանձնաժողով, որուն համար շնորհակալութիւն կը յայտնեմ կառավարութեան: Ես յոյս ունիմ, որ, ի վերջոյ, սահմանադրական փոփոխութիւնները տեղի կ'ունենան, եւ յաջորդ նախագահն ու նախագահական հիմնարկը

Խմբագրական

ՉՄՍԽԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅ ԱԶԳԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Երկրի որեւէ իշխանութիւն հարկ է որ պաշտպանը ըլլայ պետութեան ու ժողովուրդին շահերուն, ձեռքբերումներուն՝ քաղաքական իր տարբեր արեւելումներուն մէջ անգամ:

Որեւէ իշխանութեան կամ քաղաքական ընդդիմադիր ուժերու կողմէ յանուն պետութեան եւ ժողովուրդին արձանագրուած ձեռքբերումները առաւելութիւններ են, գործ պէտք է պահպանուին եւ ոչ թէ մըսխուրիս յանուն քաղաքական տարակարծութիւններու:

Իշխանութեան հասած ուժեր կրնան քննադատել իրենց նախորդողներուն բացթողումները, տեղի տուած սխալները, սրբագրումի միջոցներ որոնել, սակայն երբեք իրաւունք չունին մտաւոր իրարայաջորդ իշխանութիւններու, հայրենասուէր ազատամարտիկներու, Հայ Դատի պաշտպաններու, քաղաքական կազմակերպութիւններու՝ յանուն պետութեան ու ազգին նուաճած քաղաքական ձեռքբերումները:

ՀՀ վարչապետը 22 Յունուարին այդպիսի մտաւորներու հեղինակը հանդիսացաւ՝ ուրանալով Սարգսյանի միջոցառումը, Հայ Դատի յանձնախումբերու աշխատանքներով, Հայաստանի պետութեան, ժողովուրդին, հայ զինուորին, սփիւռքահայութեան ջանքերով ու գործունէութիւններով նուաճուած ձեռքբերումները:

Զրոյցը ունկնդրին մօտ հարցերու հետեւեալ շարքը կը յառաջացնէ բնականաբար. ի՞նչ տրամաբանութեամբ Հայոց Տեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը վարչապետը կը համարէ գլխաւորաբար սփիւռքեան գործունէութեան արդիւնք, անտեսելով Հայոց Տեղասպանութեան 50-ամեակին իսկ հայրենի մեր ժողովուրդին Հայոց Տեղասպանութեան դատապարտման ցոյցերը, որոնք եկան իրաւացիօրէն մէկ ազգ, մէկ ժողովուրդ, մէկ դատ հասկացութիւնը ամրապնդելու խորհրդային տարիներուն անգամ, միանալով Սփիւռքի ջանքերուն:

Ի՞նչ իրաւունքով անտեսումի կը մատուցուի, կ'արհամարհուի Հայոց Տեղասպանութեան 100-ամեակին Երեւանի մէջ, Հայոց Տեղասպանութեան յուշահամալիրին՝ Ծիծեռնակաբերդի մէջ ցեղասպանութեան հարիւրամեակի համահայկական հռչակագիրը, ընթերցուած Հայաստանի Հանրապետութեան նախագահին կողմէ, ուր յստակօրէն արձանագրուած են հայ ժողովուրդի իրաւունքներուն ձեռքբերման, Հայ Դատին, հայկական պահանջատիրութեան ոգին ու էութիւնը:

Ինչո՞ւ կառուցուած է Սարգսյանի յուշահամալիրը Երեւանի մէջ ու ի՞նչ կը խորհրդանշէ ան, եթէ ոչ հայ ժողովուրդի միասնական պայքարով ձեռքբերուած Սարգսյանի յարգանքն ու Հայաստանի անկախութիւնը: Այս բոլորը Հայ Դատին անջախ իրողութիւններ են: Ի՞նչ է Հայ Դատ հասկացութիւնը վերջապէս, եթէ ոչ մեր ազգին ու պետութեան արդար իրաւունքներու ձեռքբերման համար մղուած դժուար ու երկար պայքար. փուլային պայքար մը, որուն իւրաքանչիւր փուլը յաջորդին հարթ ընթացքին ճամբան կը բանայ եւ կարելի չէ ուրանալ այդ փուլերուն դերն ու շարժապայտը ըլլալու իրողութիւնը:

Հայաստանի վարչապետը Արցախի հարցին մասին խօսելով ինչո՞ւ Ատրայէճանի տարածքային ամբողջականութեան շեշտադրումը լուսարձակի տակ կ'առնէ, առանց յիշելու անգամ բանակցութիւններով իսկ ամրագրուած Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը: Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդի 26 Յունուարի յայտարարութեամբ իրաւացիօրէն յիշուած է. «Վարչապետը միտումնաւոր կերպով կը խեղդիւրէ ինքնորոշման իրաւունքի եւ տարածքային ամբողջականութեան յարաբերակցութիւնը միջազգային իրաւունքին մէջ»: Ինչո՞ւ մտաւ այս իրաւունքը՝ փոխանակ զայն պաշտպանելով բանակցելու:

Հայաստանի ներկայացուցիչը հայ ազգին ալ ներկայացուցիչն է վերջապէս: Թուրքիան տարիներ շարունակ փորձ կատարած է անջատելու Սփիւռքն ու Հայաստանը՝ իր քաղաքական հետանկարները հաշուի առնելով: Այսօր Հայաստանի վարչապետը այդ առիթը ափսէի վրայ կը հրամցնէ Թուրքիոյ՝ յանուն բանակցութիւններու:

Տնտեսական յարաբերութիւնները երբեք չեն թելադրեր զիջիլ քաղաքական ձեռքբերումներ եւ ընդամենը թուրք-ատրպէյճանական նախապայմաններուն:

Բանակցութիւնը արուեստ է վերջապէս: Այդ արուեստը կիրարկողները պարտաւոր են տիրութիւն ընել մեր հայրենիքին ու ազգին ձեռքբերումներուն, քաղաքական իրենց գործունէութեան մէջ ինչպիսի արեւելումներ ալ ունենան անոնք: Եթէ այդ կարողութիւնը չունին, ի սպառ ալ իր վատնէն Հայաստանի եւ հայ ազգի իրաւունքները ու պատասխանատուութիւն կրեն ազգին ու պետութեան առջեւ:

Ազգերու յիշողութիւնը կարելի չէ ջնջել յանուն բանակցութիւններու, յատկապէս եթէ այդ բանակցութիւնները հիմնուած են փոխադարձ շահերու վրայ, ոչ թէ միակողմանի զիջումներու՝ յանուն այնպիսի կողմերու խոստումներուն, որոնց հետ բանակցելու իմաստով հայ ազգն ու Հայաստանը դարձնու փորձառութիւն ունին:

«Գ.»

-Զորքէջարթի, 26 Յունուար 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի միջեւ համաձայնագրութիւն ստորագրուեցաւ՝ Սուրիոյ միջոցաւ Յորդանանէն Լիբանան ելեկտրականութիւն մատակարարելու շուրջ:



Սուրիոյ ելեկտրականութեան նախարար Ղասսան ալ Չամել Պէյրուօթի մէջ իր լիբանանցի պաշտօնակից Ռաւիտ Ֆայատի եւ յորդանանցի պաշտօնակից Սալէի հարապիշէի հետ միացեալ մամլոյ ասուլիսի ընթացքին ըսաւ. «Սուրիան առաջին պետութիւններէն եղած է, որ արաբական երկիրներու միջեւ գործակցութիւնը քաջալերած է»:

Նախարարը շեշտեց, որ սոյն համաձայնագրութիւնը միջարաբական գործակցութեան յաջող մեկնարկը կարելի է համարել:

-Երեքշաբթի, 25 Յունուար 2022-ին, «Sham FM» ռատիոկայանը հաղորդեց, որ ՏԱՀԵԸ-ի գինեալ ահաբեկչական խմբաւորումները Հասիչէի «Չուր» եւ «Սաքան Շապապի» թաղամասերու բնակիչները կը կալանաւորեն եւ գանոնք իբրեւ մարդկային վահաններ կ'օգտագործեն, իսկ քրտական ԶԱՍԱՏ-ի գինեալ խմբաւորումները յիշեալ երկու թաղամասերը ամբողջութեամբ պաշարած եւ բնակիչներուն ելքը կանխարգիլած են: «Ղուէյրան» թաղամասի բնակիչները ջուրի եւ հացի տագնապ կը դիմագրաւեն: ԶԱՍԱՏ-ի պարտադրած պաշարումին հետեւանքով անոնք իրենց առօրեայ անհրաժեշտ կարիքները չեն կրնար ապահովել: Սուրիական կառավարութեան եւ միջազգային կազմակերպութիւններու միացեալ ջանքերով Հասիչէի բնակիչներուն օգնութիւններ կ'ուղարկուին:



ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ԻՐ...

Սկիզբ՝ էջ 1

պիտի կարենան աշխատիլ աւելի հաւասարակշռուած եւ համակարգուած միջավայրի մէջ: Մենք կ'ապրինք իւրատեսակ իրականութեամբ, իրականութիւն, ուր Նախագահը չի կրնար ազդել պատերազմին եւ խաղաղութեան վերաբերող հարցերուն վրայ:

Իրականութիւն, երբ ան չի կրնար վերջ կիրառել այն օրէնքներուն վրայ, որոնք կը համարէ պետութեան եւ ժողովուրդին համար ոչ նպատակայարմար: Իրականութիւն, երբ Նախագահի կարելիութիւնները ընկալուած են ոչ թէ իբրեւ առաւելութիւն պետութեան համար, այլ՝ տարբեր քաղաքական խումբերու կողմէն կը դիտարկուին որպէս իրենց սպառնացող վտանգ: Իրականութիւն, ուր Նախագահը իր ներուժի գերակշիռ մասը չի կրնար օգտագործել ի նպաստ համակարգային ներքին եւ արտաքին քաղաքական հարցերու լուծման:

Իրականութիւն, ուր աշխարհը կը գտնուի մշտական կառավարման գօտիի վրայ, սակայն Նախագահը սահմանադրական գործիք չունի՝ օգնելու իր երկրին: Իրականութիւն, ուր պետութեան գլուխը ու երբեմն նաեւ անոր ընտանիքը թիրախաւորուած են տարբեր քաղաքական խմբաւորումներու կողմէն: Անոնք այնքան ալ հետաքրքրուած չեն նախագահական հիմնարկի կողմէն ի շահ երկրի իրականացուած ձեռքբերումներով, որքան իմ անցեալովս, դաւադրութեան գանազան տեսութիւններով: Իմ անձիս հանդէպ այդ «մտահոգութիւնները» կը յայտնուի նաեւ բարոյականութեան սահմաններէն՝ վերջնականապէս ուղղակիօրէն բացասաբար ազդելով առողջութեան վրայ: Ես շատ երկար մտածած ու որոշած եմ մօտաւորապէս չորս տարի աշխուժօրէն աշխատել վերջ իրաժարական տալ Հանրապետութեան նախագահի պաշտօնին: Այդ որոշումը բացարձակապէս զգացական չէ եւ կը բխի որոշակի տրամաբանութենէ: Նախագահը չունի անհրաժեշտ գործիքներ՝ երկրին եւ ազգին համար ներկայիս բարդ ժամանակներու մէջ ազդելու ներքին եւ արտաքին քաղաքականութեան արմատական գործընթացներուն վրայ:

Մեր պետութեան համար այս բարդ փուլին մէջ, երբ անհրաժեշտ է համազգային միասնութիւն, նախագահական հիմնարկը պէտք չէ դառնայ բամբասանքներու ու դաւադրութեան տեսութիւններու թիրախ՝ որմէ շեղելով հասարակութեան ուշադրութիւնը կարեւորագոյն հարցերէն:

Այսօր, ինչպէս միշտ, անհրաժեշտ են իմաստալից, խոր մտածուած, կշռադատուած եւ բովանդակալից գործողութիւններ: Այլապէս մենք՝ ողջ աշխարհի հայրութիւնը, չենք հասնիր մեր առաքելութեան նպատակին եւ կը յայտնուինք պատմութեան լուսանցքին մէջ: Մենք այլեւս սխալելու իրաւունք չունինք: Վերջաւորութեան կը փափաքիմ առանձնակի երախտագիտութիւն յայտնել մեր քաղաքացիներուն եւ Սփիւռքի մեր հայրենակիցներուն՝ երկրին համար այս բարդ ժամանակներուն մէջ հաստատակամութիւն, տոկոսութիւն, համբերատարութիւն եւ արիւթիւն ցուցաբերելու համար:

Առանձնայատուկ շնորհակալութիւն մեր քաջարի բանակի զինուորներուն եւ սպաներուն, խոնարհումս մեր Հայրենիքին համար իրենց կենսը գոհաբերած հերոսներու ընտանիքներուն: Շնորհակալ եմ նաեւ Հանրապետութեան նախագահի աշխատակազմի բոլոր աշխատակիցներուն եւ պետական կառոյցներու իմ գործընկերներուն՝ միատեղ արդիւնաւետ աշխատանքին համար:

Լուրեր Հայաշխարհին

ԿԻՐՕ ՄԱՆՈՅԵԱՆ «ՏՊԱԽՐՈՒԹԻՒՆ ԿԱՅ, ՈՐ ԹՈՒՐԲԻՈՅ ՇԵՏ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԳՈՅԱՃԱԾ ԵՆ, ԻՍԿ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՃՈՒՄ ԵՆ»

ՀՀԴ Բիւրոյի անդամ, Հայ Դատի եւ քաղաքական հարցերու գրասեն- ցակի ղեկավար Կիրո Մանոյեան՝ անդրադառնալով Թուրքիոյ հետ յարա- քերութիւններու կարգաւորման փաշինեանական մօտեցումներուն, Yerkir.am-ի հետ զրոյցին մէջ ըսաւ, որ Փաշինեան որոշած է, որ պէտք է Թուրքիոյ հետ կարգաւորել յարաքերութիւնները, իսկ Թուրքիան անընդհատ կը յիշեցնէ Նախապայմաններու գոյութիւնը:



«Այս իշխանութիւնները Թուրքիայէն կը լսեն Նոյն յայտա- րարութիւնները, բայց մէկ այլ բան կը հասկնան: Փաշինեան Թուրքիոյ հետ սկսած է գործըն- թաց մը, բայց նպատակը ի՞նչ է, յստակ չէ: Հիասկսալու պարագա- յին՝ անմեղութեան կարելի է վե- րագրել, բայց կան հիմքեր են- թադրելու, որ ասիկա դաւաճա- նական քայլ է, դաւադրութիւն:

Փաշինեան կը փորձէ ամբողջական յանձնումի ենթարկել մեր երկիրը: Այս իշխանութիւնը, որ Նոյն Թուրքիոյ դէմ պատերազմ մղած է, փափաքելու պարագային ի վիճակի պիտի չըլլայ պաշտպանել Հայաստանի եւ հայութեան Մանոյեան»:

Յիշեցնենք, որ արցախեան վերջին պատերազմին ընթացքին, Ն. Փա- շինեան յայտարարած էր, որ Թուրքիան չէ փոխած իր քաղաքականութիւնը, Թուրքիան կը շարունակէ հայերը ցեղասպանութեան ենթարկել: Բայց իրա- դարձութիւնները այնպէս զարգացան, որ այդ անձնաւորութիւնը ամէն ջանք ու եռանդ սկսաւ չինայել Թուրքիոյ հետ յարաքերութիւնները կարգաւորե- լու համար: Աւելին. ան առիթը կ'օգտագործէ անգամ մը եւս ժողովուրդը համոզելու, որ Թուրքիոյ հետ յարաքերութիւններ հաստատելը պահուն հրա- մայական է:

Ըստ Կիրո Մանոյեանի, հիմքեր կան ենթադրելու, որ որոշակի հարցե- րու շուրջ այս իշխանութիւնները Թուրքիոյ հետ համաձայնութիւններ ձեռք բերած են, իսկ ներկայիս բեմականացում կը կատարեն՝ ցոյց տալու հա- մար, որ որոշ գործընթացներ, այնուամենայնիւ, ընթացքի մէջ են:

Յիշեցնենք, որ Ազգային Ժողովի մէջ հարց-պատասխանի ընթացքին, Ն. Փաշինեան յայտարարեց, թէ ինք կը կրէ ամբողջ պատասխանատու- թիւնը հայ-թրքական յարաքերութիւններու կարգաւորման: Հարց կը յա- նաջանայ, թէ Փաշինեան այս յայտարարութիւնները կ'ընէ, որովհետեւ կը գիտակցի՞ որ, այս եւ նման այլ յայտարարութիւններ ընելով, ինք պատաս- խանատուութիւն չի կրեր, օրինակ՝ յանձնուողական փաստաթուղթի ստո- րագրութեան, Արցախի 75%-ի յանձնումի պարագային:

Կ. Մանոյեան տուեալ յայտարարութիւնը մեկնաբանելով ըսաւ, որ եթէ թիւ մէկ պատասխանատուն Փաշինեանն է, թիւ մէկ մեղաւորը ո՞վ է: Փա- շինեան, ըստ Եւրօթեան, փորձած է, ամէն ինչ խեղաթիւրելով յառաջանալ:

Անդրադառնալով այն լուրերուն, որ Թուրքիա Հայաստանի հետ հան- դիպումները չի փափաքիր կատարել որեւէ երրորդ երկրի մէջ, Մանոյեան ըսաւ. «Ռուսիոյ մասնակցութեամբ Հայաստանի եւ Թուրքիոյ բանակցու- թիւնները կրնան մէկ կէտի հասնիլ, հաւանաբար վնասելով Ռուսիոյ շահե- րուն: Յստակ է, որ Ռուսիա կը նախընտրէր իր հովանաւորութեամբ եւ մաս- նակցութեամբ բանակցութիւնները յառաջ մղել, որպէսզի վերահսկէր անոնց ընթացքին: Ռուսիա չի փափաքիր, որ իրադարձութիւնները զարգանան այն- պէս, ինչպէս պիտի զարգանային 2008-2009 - ին: Բնականաբար, եթէ եր- կու կողմերը առանձին խօսին, արդիւնաւետ պիտի ըլլայ, բայց ներկայ իրա- վիճակին մէջ խօսիլ արդիւնաւետութեան մասին, սխալ է: Թուրքիա իր ու- զածը պիտի ստանայ, երբ կատարուին Թուրքիոյ նախապայմանները, որոնք յստակ է՝ մեր շահերէն չեն բխիր», ըսաւ Մանոյեան:

Պատասխանելով այն հարցումին, թէ եթէ դէպքերը այնպէս զարգա- ցան, որ ներկայ իշխանութիւնները, յանուն Թուրքիոյ հետ յարաքերութիւն- ներու կարգաւորման, պատրաստ ըլլան ընդունելու Թուրքիոյ նախապայ- մանները, այդ նախապայմաններու ընդունումը ինչպէ՞ս կ'ընկալուի Հա- յաստանի եւ Սփիւռքի մէջ, Կիրո Մանոյեան պատասխանեց, որ Թուրքիոյ նախապայմաններէն մէկը Հայոց Տեղասպանութեան ճանաչման ու դա- տապարտման գործընթացը միջազգային օրակարգէն հանելն է, եւ Էրտո- դակի խօսակերպ յայտարարեց, որ այս բանակցութիւնները ամբիկապի համայնքի քաղաքական օրակարգը ի չիք կը դարձնեն:

«Յստակ է, որ հարուած պիտի հասնի հայութեան շահերու պաշտպա- նութեան, Հայ Դատի յանձնարարութիւնները, բայց ասիկա չի նշանակել, որ ամէն ինչ պիտի տապալի: Դժուար պիտի ըլլայ, որովհետեւ հայրենի պետութեան իշխանութիւնները ամբողջութեամբ այլ ուղղութեամբ կ'երթան, բայց այս հարցը կարելի է դիմադրաւել», եզրափակեց Կիրո Մա- նոյեան:

ՀՀԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵՊ. ԽՈՐՀՈՒՐԳ. «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԱ՝ Մ ԳԻ ՓԻՏԵՐ, ԿԱ՝ Մ ՄԻՏՈՒՄՆԱՌՈՐ ԿԸ ԽԵՂԱԴԻՐԷ ԻՆԵՐՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՌԻՆԵՐԻ ԵՒ ՏԱՐԱԾԲԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆԵՐԻ ՅԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՌԻՆԵՐԻՆ ՄԵՉ»

ՀՀԴ Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդը յայտարարութիւն տարա- ծած է ՀՀ վարչապետի անհիմն պնդումներուն մասին: Յայտարարութեան մէջ ըսուած է.

«ՀՀ վարչապետը 24 Յունուար 2022-ի հարցազրոյցին մէջ թոյլ տուած է այնպիսի հաստատումներու, որոնք մէկ կողմէն կը խեղաթիւրեն պատ- մական փաստերը, միւս կողմէն՝ գրեթէ Նոյնութեամբ կը կրկնեն ատրպեյ- ճանաթրքական թեզերը, որոնք դէմ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հայ Դատի յանձնարարութիւնը ու գրասենեակներու համաշխարհային ցանցը տեւականօրէն արդիւնաւետ պայքար կը մղեն: Ներկայիս չափազանց ցա- ւալի է Հայաստանի գործադիր իշխանութեան ղեկավարի շրթներէն լսել թշնամական թեզերու կրկնութիւնը:

Ի թիւս բազմաթիւ թշնամահաճոյ պնդումներու, Փաշինեան յայտա- րարած է, թէ «Հայաստանի Հանրապետութիւնը երբեք Հայ Դատի քաղա- քականութիւն չէ վա- րած», իսկ Հայոց Տե- ղասպանութեան մի- ջազգային ճանաչման գործընթացը գլխաւո- րապէս համարած է սփիւռքեան գործունեութեան արդիւնը:

Հայ Դատ ըսելով, Փաշինեան տուեալ պա- րագային, հաւանաբար, նկատի ունի Հայոց Տեղասպանութեան պահան- ջատիրութեան հարցը՝ դիտաւորութեամբ մոռացութեան մատնելով այն փաստը, որ 1921-ին Կարսի պայմանագիրը, որ միջազգային իրաւունքի տեսանկիւնէն առ ոչինչ է, ցայսօր ընդունուած չէ Հայաստանի Հանրապե- տութեան կողմէն որպէս Հայաստան-Թուրքիա սահմանի իրաւական հիմք: Այդ մասին կը վկայէ 10 Դեկտեմբեր 2009-ին Հանրապետութեան նախա- գահ Սերժ Սարգսեանի ուղերձին մէջ կատարուած հետեւեալ հաստատու- մը. «Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ առկայ սահմաններու հարցը ենթա- կայ է լուծման միջազգային իրաւունքին համաձայն: Արձանագրութիւննե- րը անկէ աւելի ոչինչ կ'ըսեն»: Աւելին. ցիւրիխեան արձանագրութիւններու սահմանադրականութեան մասին ՀՀ Սահմանադրական դատարանի 12 Յունուար 2010-ի որոշումով՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանը նշուած է իբրեւ «փաստացի սահման»:

Հայոց Տեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած նախաձեռ- նութիւնները համակարգող պետական յանձնաժողովին կողմէն կազմուած է 29 Յունուար 2015-ին Ծիծեռնակաբերդի մէջ ներկայացուած՝ Հայոց Տե- ղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը եղած է եւ կը մնայ Հայոց Տեղասպանութեան առնչակից հանգամանքներուն եւ յա- նաջիկայ ընելիքներուն մասին համազգային եզակի փաստաթուղթ, որ իր համընդգրկունութեամբ եւ ընդունման համախոհութեամբ ցայսօր կը շա- րունակէ բարձր արժէք ունենալ:

Պետք է արձանագրել նաեւ այն փաստը, որ եթէ Հայոց Տեղասպանութե- ան միջազգային ճանաչման գործընթացը գլխաւորապէս եղած է սփիւռք- եան կառույցներու գործունեութիւն, այդ գործունեութեան արդիւնաւետու- թիւնը բազմապատկուած է այն ատեն, երբ ՀՀ օրուան իշխանութիւնները սատարած են այդ գործին՝ 23 Օգոստոս 1990-ին որդեգրուած Հայաստանի անկախութեան հռչակագիրով ստանձնուած յանձնառութեան համապա- տասխան:

Հայոց Տեղասպանութեան միջազգային ճանաչման, ՀՀ այս իշխանու- թիւններու կողմէն կառավարութեան գործունեութեան ծրագիրին կատա- րուած անընդհատական յղումներուն մասին անդրադառնալով, պէտք է նկա- տել, որ ՀՀ կառավարութեան 2021-2026-ի ծրագիրին մէջ նշուած է. «Տե- ղասպանութեան միջազգային ճանաչումը կառավարութեան կողմէ պիտի ծառայէ ոչ թէ տարածաշրջանային լարուածութեան աճին, այլ ընդհակա- նակը՝ տարածաշրջանի լիցքաթափման նպատակին»: Հարց կը յառաջա- նայ, թէ ինչպէ՞ս կարելի է Տեղասպանութեան միջազգային ճանաչումը հա- մարել Թուրքիոյ հետ յարաքերութիւններու զարգացման հետ: Պետք է նաեւ ուշադրութեամբ նկատել, որ Տեղասպանութեան միջազգային ճանաչումը կառավարութեան ծրագիրին մէջ չի ներկայացուիր իբրեւ գործընթաց, որ կը խօսի ՀՀ արտաքին քաղաքական օրակարգէն ճանաչման գործընթացը դուրս բերելու մասին:

Հայաստանի վարչապետը չէ խորշած նաեւ խիստ վտանգաւոր յայ- տարարութիւններ ընել Արցախեան հիմնահարցին մասին:



ԱԿՆԱԿԿ

ՆԱԽԱԳԱՏ Ա. ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆՐԱԺԱՐԱԿԱՆԷՆ ԵՏՔ ԻՆՆ



Ա. Սահարճեան

Հայաստանի հանրապետության նախագահ Արմեն Սարգսյան Կիրակի, 23 Յունուարի երեկոյան քաղաքական ռուժը մը պայթեցուց, յայտարարելով, որ կը հրաժարի իր պաշտօնէն: Բնական հետեւանքը եղաւ այն, որ հայրենի քաղաքական շրջանակներ տարաբնոյթ մեկնաբանութիւններով անմիջական արձագանգներ արձակեցին, իսկ ամբողջական պատկերին եւ հրաժարականին խորքային՝ ներքին, շրջանային ու արտաքին պատճառներուն յստակացման համար, կը սպասուին նոր մանրամասնութիւններ, մասնաւորաբար վարչապետ Ն. Փաշինեանի տալիք մամուլը ասուլիսը, նախատեսուած՝ Երկուշաբթի, 24 Յունուարին, բայց ո՛չ միայն այդ, այլ նաեւ՝ միջազգային արձագանգներ (ի վերջոյ, հրաժարականին «ռուժը» պայթեցաւ այն պահուն, երբ քաղաքական աշխարհը շաբաթավերջի արձակուրդի մէջ էր կամ արդէն քունի անցած էր):

Որեւէ նախագահի հրաժարական՝ ինքնաբերաբար կը նշանակէ, թէ տագնապ մը գոյութիւն ունի տուեալ երկրին մէջ: Հրաժարականին բնագիրը, որ հրապարակուեցաւ Կիրակի երեկոյ, ուղղակի եւ անուղղակի ակնարկութիւններ կ'ընէ նման տագնապի առկայութեան, սակայն դիտողին ուշադրութենէն չվրիպեցաւ այն, որ այս քայլին գլխաւոր շարժառիթը, ըստ հրաժարեալին, Սահմանադրութեան թերի վիճակն է. Սարգսյան կը գանգատի, թէ այժմու սահմանադրութիւնը նախագահին չի ընձեռեր կարելորդ գարգացումներու (ներքին, արտաքին, դիւանագիտական, տնտեսական եւ այլ) վրայ ազդելու հնարաւորութիւնը. ան կը հաւաստէ, թէ «երկար մտածած է» այս որոշումը տալէ առաջ, հպանցիկ ակնարկութիւն կ'ընէ նաեւ իր առողջական վիճակին (Արաբական Միացեալ Էմիրութիւններ անցեալ շաբթուան այցելութենէն եւ «յուսալից պայմանագրութիւններ» ստորագրելէ ետք, նախագահը արձակուրդի գացած էր Անգլիա, «բժշկական դարմանում» ստանալու բացատրութեամբ):

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԷՆ ԲՆԱԳԻՐԸ

Հրաժարականին բնագիրը բաւական երկար բացատրութիւններ կը բովանդակէ: Կայ պատմական ակնարկ մը, հայրենիքին բազմահազարուան իր ծառայութիւններուն մասին լուսաբանութիւններ եւ հաւաստիքներ (պէտք չունինք կասկածով մօտենալու այս բաժինին), ապա, ջողարկեալ եւ յստակ բացայայտումներ, թէ ինչո՞ւ չէ կրցած իր առաքելութիւնը կատարել լաւ ձեւով, Սահմանադրութեան արգելակներու ցանկագրում, եւ յետոյ գոհունակութիւն, որ կամավարութիւնը Սահմանադրութեան բարեփոխման համար յանձնաժողով կազմած է, այսինքն, լուռ մաղթանք՝ որ նոր Սահմանադրութիւնը թօթափէ արգելակող բարդութիւնները:

Կարելի է երկարօրէն կանգ առնել հրաժարականին իրերայաջորդ բաժիններուն վրայ, մեկնաբանութիւններ ու վերլուծումներ կատարել, վիճարկել այս կամ այն հաստատումը: Նման մօտեցում մեզ պիտի հեռացնէ կացութիւնը իր պարզ ու նոյնքան բարդ պատկերին մէջ դիտարկելու ընթացքէ, որովհետեւ, ի վերջոյ, հրաժարականը արձակուած է, յստակ է, որ անիկա հետեւանք է ՏԱԳՆԱԳԻԻ, որուն եական մանրամասնութիւններն կը խուսափի ստորագրողը, կը բաւականանայ միայն արձանագրելով, որ հայրենիքը կը գտնուի բարդ վիճակի մէջ, որոշ ջողարկումով կոչ կ'ընէ հայրենի եւ արտերկրի ժողովուրդին, որ միացեալ կեցուածքով դիմագրաւէ վտանգաւոր մարտահրաւերները:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԷ ԱՒԵԼԻ՝ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐ

Նախագահ Սարգսյանի հրաժարականը, անոր պահն ու բովանդակութիւնը՝ թէեւ հպանցիկ ակնարկութիւններ կ'ընեն առկա տագնապին որոշ երեսներուն, սակայն մեր հայրենիքին ու ազգին դիմագրաւած հարցերուն, հարցականներուն բաւարար պատասխան չեն բերեր, ընդհակառակն, կը ստեղծեն հարցումներու նոր շարան մը, որոնցմէ մաս մը ունին ցաւոտ պատասխաններ՝ եթէ արձանագրուած սրտցաւ, բայց առաւելաբար ենթադրեալ մեկնաբանութիւնները, վերլուծումները (գոնէ անոնց մէջ մասը) ճիշդ են. հոս ալ պատճառ չունինք անտեսելու կամ արհամարհելու անմիջական արձագանգները:

Արտայայտուած տեսակետներուն մէջ մասը բաւական սուր քննադատութիւն էր. ոմանք այս քայլին մէջ տեսան «ճակատագրական պահերու պատասխանատուութենէ խուսափելու» վաղեմի ու ծանօթ վարքագիծ մը (յիշեցում կատարուեցաւ, որ 25 տարի առաջ, այդ օրերու վարչապետ Ա. Սարգսյան, սուր հակադրութեան մէջ ըլլալով օրուան գլխաւոր ղեկավար Վազգէն Սարգսյանի հետ, հրաժարած էր. այդ հակադրութիւնը յաճախ մեկնաբանուած է իբրեւ մէկ կողմէ՝ ազգային-հայրենասէր եւ միւս կողմէ՝ արեւմտամետ-առեւտրամետ մտածողութեանց միջեւ բախում...): Հարցումներ ուղղուեցան, թէ արդեօք Սարգսյան ինչո՞ւ այս օրը, այս պահը ընտրած է հրաժարական տալու: Ակնարկութիւնները կ'երթան մէկ կողմէ՝ Փաշինեանի նախատեսուած ասուլիսին, ու միւս կողմէ՝ Հայաստանի եւ աշխարհագրա-քաղաքական բեմին վրայ ստեղծուած իրականութիւններուն՝ 44-օրեայ պատերազմէն ետք անկումէ-անկում գացող Հայաստան-Արցախին, Հայաստան-Թուրքիա այլաճակ բանակցութիւններու բացման եւ անոնցմէ ծագելիք՝ հաւանական (պարտաւորական) նոր համաձայնագրի մը, իսկ անելի հեռու բանալով կարկինը՝ Ղազախստանի դէպքերէն մինչեւ Ուքրանիոյ շուրջ ստեղծուած վտանգալից կացութիւնը, դիւանագիտական

մրցավագքերը, նոյնիսկ Արեւմուտքի դաշնակիցներուն միջեւ ի յայտ եկող «մանր տարակարծութիւնները», Ռուսիա-Պելոնուսիա գիծին վրայ ծանօթ մերձեցումները, իսկ այդ բոլորին զուգահեռ՝ Ռուսիա-Հինաստան-Իրան միացեալ ռազմափորձերէն ծագող պատասխանները, ուղղուած՝ Արեւմուտքի դաշնակիցներուն եւ անոնցմէ հասնող սպառնալիքներուն (ասոնք այլապէս խոր քննարկումի արժանի գարգացումներ են): Նման հարցումներ արձակողներ, իրենց կարգին, հարց տունին, թէ Սարգսյան արդեօք նոր իրազեկ դարձած է թէ Սահմանադրութիւնը իր ձեռքերը կաշկանդող գործօն է, ան պէտք էր չորս տարի՞ սպասեր՝ նման «գիւտ» ընելու համար, տակաւին, հարց տրուեցաւ, թէ տարի մը առաջ, արցախեան պարտութենէն ետք վարչապետին հրաժարականը պահանջողներուն միացած, յետոյ դարձեալ իշխանաւորին հետ գործակցութիւնը վերաբացած նախագահը արդեօք Փաշինեանէն... արտօնութիւն կը սպասէր հրաժարական տալու համար: Ի վերջոյ, Փաշինեան տակաւին քանի մը օր առաջ, յոխորտանքով զօրակցութիւն յայտնած է իր տնտեսութեան... կատակասէր նախարարին, երբ ընդդիմադիր երեսփոխան մը արդարօրէն յիշեցուցած էր՝ ձախողութեան պարագային հրաժարական տալու խոստումը. վարչապետը վճռական ոճով յայտարարած էր, թէ ինք հրաժարելու արտօնութիւն չէր տուած նախարարին, հասկցուցած էր՝ թէ ինքզինք կը նկատէ որոշում տուողներուն ալֆան եւ օմեղան, իսկ Թուրքիոյ հետ բանակցող իր բանազնացը խորհրդարանի նախագահութեան աթոռնէն բարկաճայթ յայտարարած էր, թէ իրենք (այսինքն՝ «պայմանագրեալները») կ'ընեն եւ պիտի ընեն այն՝ ինչ որ կ'ուզեն: Չէ՞ որ վերջին ընտրութիւններուն ժողովուրդը իրենց «մրճեայ լիազօրութիւն» տուած էր, ուրեմն՝ լիազօրուած կը գգան մինչեւ իսկ նոր մղոներ կտրելու... գաղտնի բանակցութիւններ վարելու եւ Հայաստանի ի վսաս՝ բանաւոր կամ գրաւոր նոր համաձայնութիւններ գոյացնելու:



Շարունակելով հարցումներու շարքը, դիտողները նշեցին, որ նախագահը շա՛տ անելի յարմար առիթներ ունէր հրաժարելու, երբ Հայաստան կրեց ըլլալիք պարտութիւնը, յետոյ ի յայտ եկան «բանաւոր համաձայնութիւնները», յետոյ Ատրպեյճան հողեր գրաւեց Հայաստանէն, մինչդեռ հանրապետութեան նախագահին սահմանադրական պարտականութիւններուն մաս կը կազմէ, իր երդումով իսկ, պահպանել երկրի հողային ամբողջականութիւնը...: Տակաւին, հարց տրուեցաւ, թէ ան ինչո՞ւ չհրաժարեցաւ, երբ անցեալ Յունիսին վերադարձուեցաւ երկիրը պարտութեան տարած եւ աղաղակող նոր կորուստներու առաջնորդող իշխանութիւնը, այլ բոլոր հանգրուաններուն, վերադարձաւ իշխանութեան որոշումները վաւերացնող իր դերին, բազմիցս հրաժարեցաւ իր՝ թերի որակած Սահմանադրութեան ընձեռած իրաւասութիւններէն ու մնաց որոշումներու վրայ կնիք դնողի՝ ձեւական նախագահի իր «անվստահ ճամբուն» մէջ:

ԻՆՉՊԻՍԻ՞ ԸՆԾՈՒՄՆԵՐ

Սուր քննադատութիւններ արտայայտող յիշեալ եւ բազում այլ հարցականներու դիմաց (չենք ուզեր այս սիւնակը ծանրաբեռնել շարքը երկարելով), եղան համեմատաբար անելի «վերապահ» եւ կշռադատուած մեկնաբանութիւններ:

Առաջին հերթին, հարց ծագեցաւ, թէ նախագահին վրայ ի գործ դրուած ճնշումները՝ ներքին բեմէն՝ իշխանական դասէն մինչեւ ընդդիմադիրներ, ապա նաեւ՝ արտաքին շրջանակներէ, սկսելով դաշնակից-գործակից սեպուղներէ մինչեւ թշնամիներ, ո՞ր հասած պէտք է ըլլան, որ ան ի վերջոյ որոշած է այս քայլին դիմելու, եւ եթէ արտաքին ճնշումներ կան, ո՞ր լծակն է անելի ազդեցիկը: Իբրեւ անմիջական նկատողութիւն՝ արձանագրուեցաւ, որ Ա. Սարգսյան ի վերջոյ իրազեկ դարձած է, որ «ֆութպոլային դիւանագիտութենէն» անելի քան 12 տարի ետք, ու անոր ամլութեան մատնուելէն մօտաւորապէս տասնամեակ մը ետք, Հայաստանին կը պարտադրուի անոր տարբերակը, այժմու իշխանութիւնն ալ ոտքէն մինչեւ գլուխը, նաեւ գոյգ ձեռքերով, պատրաստակամ է խարանդ պայմանագիրներ կնքելու, քայլեր՝ որոնք ինք չի ցանկար մասնակից ըլլալ եւ կարճագոյն ճամբան՝ հրաժարիլ ու մէկդի քաշուիլն է: Չէ՞ որ Թուրքիոյ եւ Ատրպեյճանի հետ սահմաններու բացման մրցավագքը սկսած է եւ իր հրաժարականին հրապարակումէն կարճ ատեն մը առաջ, իշխանութեան շրջանակները նորագոյն ապացոյցները հրապարակեցին, թէ՛ գործնական քայլեր կ'առնուին դէպի Նախիջեւան-Մեղրի-գրաւեալ Արցախ երկարող երկաթուղագիծին վերաբացման ուղղութեամբ, իսկ սա միակ ցուցանիշը չէ թշնամիէն արդար հաշիւ պահանջելէ առաջ՝ բարեկամութեան եւ գործակցութեան փուլ ցատկելու «իմաստուն քաղաքականութեան» (յուսալի է, որ նախագահը չունի «ինձմէ ետք՝ ջրհեղեղ» մտածումը):

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԷՆ ԵՏՔ ԻՆՆ

Սպասելի է, որ վերոյիշեալ եւ տակաւին չհնչած բազմաթիւ հարցումներուն պատասխանները աստիճանաբար յստականան յառաջիկայ օրերուն, սկսելով՝ Երկուշաբթիէն եւ վարչապետին ասուլիսէն, երբ իշխանական խմբակը պիտի հրապարակէ այս նոր գարգացումին մասին իր տեսա-

ՀԱՅ ԱՆԿԱԿ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ՓԱԿՈՒՐԻՆ ԵՒ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՎԵՐՋԻՆ ԽԱՂԱՔԱՐՏԸ



Կարո Արմենյան

ՀՀ Նախագահին հրաժարականը ինքնին ախտանիշ մըն է, որ կը բացայայտէ բնոյթը հայ անկախ պետականությունը ներսէն պատուհասող վարակին: Նախագահը կու գայ մեզի ըսելու, որ ճգնաժամի առջեւ է պետականությունը եւ ինք այլեւս ի վիճակի չէ կասեցնելու գահավեժը:

Իրականության մէջ, պրն. Նախագահը իրողապէս (de facto) հրաժարեցաւ այն օրն իսկ, երբ Փաշին-

եան ստորագրեց անձնատուութեան ամօթալի փաստաթուղթը: Կ'ակնարկէմ 9 Նոյեմբեր 2020-ի Եռակողմանի Յայտարարութեան, որմով Փաշինեան կը շրջանցէր ՀՀ Նախագահի սահմանադրական իրաւասութիւնները արհամարհելէ ետք արտագործ նախարարն ու ՀՀ Ազգային Ժողովը: Յայտարարութեան հրապարակումէն անմիջապէս ետք, Նախագահ Սարգսեան յստակացուց, թէ ինք՝ իր նախագահական հանգամանքով դուրս պահուած էր 9 Նոյեմբերի գործընթացէն եւ այդ իսկ փաստով շրջանցուած էր ՀՀ Սահմանադրութիւնը: Նախագահի յայտարարութիւնը, ըստ էութեան, ապօրինի եւ հակասահմանադրական կը հռչակէր 9 Նոյեմբերի Եռակողմանի Յայտարարութիւնը եւ այդ իսկ իրողութեամբ Նախ. Արմեն Սարգսեան կը դադարէր գործելէ որպէս ՀՀ Նախագահ:



Բնական պայմաններու մէջ, այդ իսկ վայրկեանին,- եւ Նախագահի ուղիղ միջամտութեամբ,- պետք էր, որ տեղի ունենար ՀՀ պետական կեանքի,- օրէնքով կանխորոշուած,- մաքրագ տուումը: ՀՀ Սահմանադրութեան հանդէպ վարչապետի առած դաւադրական քայլը պետք էր արագօրէն յանգեր վարչապետ Փաշինեանի եւ իր կառավարութեան հրաժարականին: Նախագահի դիրքորոշումը յստակ էր այս խնդրին մէջ: Եւ սակայն Փաշինեան կրցաւ կառչիլ իր իշխանական դիրքերուն արագօրէն վարկաբեկելով ՀՀ Նախագահի իրաւասութիւններն ու ՀՀ Սահմանադրութեան գերաստիճան հանգամանքը: Եւ ինքնաբերաբար բացայայտուեցաւ Նախ. ՀՀ Սահմանադրական Դատարանի սնանկութիւնը ուժերու այս յարաբերակցութեան մէջ: 9 Նոյեմբերի դա-

ւադրական աքթով մեր երկրին եւ մեր ժողովուրդին կը պարտադրուէր ոչ միայն ամօթալի անձնատուութիւն մը, այլեւ հայ անկախ պետականությունը կը մտնէր սահմանադրական աննախընթաց տագնապի մը քառասյին ծիրէն ներս: Նախ. Սարգսեան քանիցս կը մատնանշէ այն իրողութիւնը, որ նախագահական իշխանութեան տրուած են պատասխանատուութիւններ առանց սակայն գայն օժտելու անհրաժեշտ գործիքներով յիշեալ պատասխանատուութիւններու գործարկման համար: Իրականութիւնը, սակայն, այլ պատկեր կը ներկայացնէ: Սահմանադրութիւնը Նախագահին տուած է ազդու գործիքներ Սահմանադրութեան տիրութիւն ընել կարենալու բացառիկ լիազօրութեամբ: Այդ գործիքները, սակայն, սառեցուած են քաղաքական գործընթացի մեքենայութիւններով: Թէ՛ Սերժ Սարգսեանի եւ թէ՛ Փաշինեանի քաղաքական վարքագծով ձեւաւորուած այլանդակ խորհրդարանները գործնականօրէն ջնջեցին Նախագահական իրաւասութեանց անհրաժեշտ գործիքակազմը եւ Նախագահական իշխանութիւնը ըրին զինաթափ: Իրականութեան մէջ, ՀՀ Ազգային Ժողովը էր, որ դադարեցաւ իշխանութիւն ըլլալէ եւ խորհրդարանական իր «զգեստաւորումի» ետին երկիրը վերադարձաւ իր նախկին «Նախագահական» կարգավիճակին: Անելի վա՛տը: Ան վերածուեցաւ ամբողջատիրութեան: Վերահաստատուեցաւ օլիկարխիան իր առանձնատու գործիքակազմով, որ Նախ. կը սահմանէ այսօրուան փաշինեանական վարչակարգին էութիւնը: Կը սահմանէ հայ անկախ պետականութեան ներկայ փակուղին, որմէ պաշտօնապէս դուրս գալու իր որոշումն է, որ կը յայտնէ այսօր Նախագահ Սարգսեան:

Պետք է յիշեցնել, որ գործիքներու բացակայութեան խնդիրը նորութիւն չէր Պր. Նախագահին համար: Ան քաջ գիտէր, թէ ի՛նչ բնագործերով պիտի գործէին երկրի օլիկարխիայի ուժերը եւ անդամալուծէին Նախագահը որպէս վերին իշխանութիւն: Պետք է ենթադրել, որ ինք այնուամենայնիւ հաւատաց, որ պիտի կարենար ըլլալ դրական դերակատար պետութեան կեանքին մէջ յենուելով իր անձնական հսկայ վարկին վրայ: Կը յուսար, որ իր ներդրումը տնտեսութեան զարգացման եւ արտաքին յարաբերութիւններու ոլորտներուն մէջ զինք պիտի գինէին յատուկ (թէկուզ անպաշտօն) կարողականութիւններով: Կը յուսար, որ ինք կը յաջողի ըլլալ աւե-

լի մեծ քան իր սահմանադրական հանգամանքը: Կը յուսար, որ ինք իր կարողականութիւններու կշիռով կը յաջողի ըլլալ հաստատութիւնը եւ ատով իսկ հաստատութիւնը օժտել պատմական գերակայ տարողութեամբ: Եւ թերեւս այս անկախութիւնը հիմնաւորուած էր Սերժ Սարգսեանի վարչապետական կարճատեւ իշխանութեան շրջանին: Փաշինեանի իշխանութիւնը եկաւ բացայայտելու բոլորովին այլ իրականութիւն: Փաշինեան եկած էր վերջ տալու ՀՀ Սահմանադրութեան եւ հետեւաբար՝ Նախագահական իշխանութեան:

Թէ ինչպէ՛ս զուգահիւսեցան պետական համակարգի քայքայման գործօնը (որ փաշինեանական վարչակարգն է) եւ թշնամիի նախա-յարձակումը (aggression, ագրեսիա) երկիրը նետելով 44-օրեայ պատերազմի քառսյին մէջ եւ պետութիւնը մխրճելով ներկայ փակուղիէն ներս՝ խնդիր մըն է, որ կը կարօտի անմիջական յստակացման: Նախ. Սարգսեան իրաւունք ունի հրաժարման որոշում ընդունելու, բայց Նախ. ան ունի բարոյական պարտաւորութիւնը հանրութիւնը լուսաբանելու ներկայ իշխանութեան հետապնդած նահանջական քաղաքականութեան մասին:

Անկեղծօրէն եւ լիովին լուսաբանել հանրութիւնը այն հզօր գործիքն է, որ պատմութիւնը դրած է իր ձեռքերուն մէջ: Զգործածել այդ գործիքը իր լիարժէք ուժականութեամբ կը նշանակէ գիտակցաբար մխիթել Նախագահի վերջին եւ հզօր խաղա-

քարտը: Այս խաղաքարտը այն տարբերութիւնն իսկ է, որ Նախագահ Սարգսեան երազած է բերել հայ անկախ պետականութեան եւ հիմա է ժամանակը գայն ազգային արժէքի վերածելու: Ստանձնեցէ՛ք այդ արկածախնդրութիւնը, պարոն Նախագահ: Բացէ՛ք թղթածրարը: Դո՛ւրս բերէք մեր ժողովուրդը Փաշինեաններու ստեղծած ախտաւոր շրջանակէն: Դիմակազե՛րձ ըրէք ձեր ձեռքերը կապողները: Յոյց տուէք, որ մեր երկիրը,- թէկուզ վիրաւոր,- պարտուած չէ հակառակ փաշինեանական վարչակարգի սփռած բարոյալքման վարակին:

Ձեր հրաժարականը թող հնչէ որպէս բողոք: Թող հնչէ որպէս մարտի հրաւեր: Որպէս սկիզբ՝ ձեր նոր լիազօրութեան: Ոչ՝ որպէս նահանջ եւ որպէս վերջ: Մի շնորհաւորէք երկիրը քայքայման տանող այս հաւաքածոն իրենց ստեղծած «Սահմանադրական Փոփոխութիւններու Յանձնաժողով»-ին համար: Դուք քաջ գիտէք, թէ ինչ բան է այդ սուտը: Մերկացուցէ՛ք այդ սուտը եւ օգնեցէ՛ք, որ արագօրէն վերականգնի մեր ժողովուրդին բարոյական եւ քաղաքական կորովը ընդդէմ չարիքի ուժերուն եւ ի պաշտպանութիւն մեր պետականութեան: Այսօր եւս դուք ունիք պարտաւորութիւնը գահավեժը կեցնելու ներշնչելով մեր ժողովուրդին իր քաղաքական ուժի գիտակցութիւնը: Լիազօրելով ժողովուրդը՝ որմէ կը բխի ձեր իսկական լիազօրութիւնը: Դուք ա՛յդ լիազօրութեան գիտուորն էք: Եւ Տէր ընդ ձեզ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- ՍՕ Խաչ- Ազգ. Պատասպարանը կարիքը ունի փորձառու քարտուղարուհիի մը, որ լաւապէս տիրապետած ըլլայ հայերէնի եւ հմուտ՝ համակարգիչի գործածութեան:
- Աշխատանքի ժամերն են առաւօտեան 10:00-էն երեկոյեան ժամը 6:00:
- Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել ստորեւ յիշուած համարներուն, կամ ներկայանալ Ազգ. Պատասպարան:
- 0945472619 - 0944566368 - 4442022

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբեքեան-Պողիկեան
 Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
 Վեհան Պարսումեան
 Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
 Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարոյան
 Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
 Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
 Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբեքեան
 Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

Թուրքիոյ նուրջ

WALL STREET JOURNAL «ԻՆՉ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԹՈՒՐԵՒՈՅ F-16 ԿՈՐԾԱՆԻՉՆԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՐՅՈՒՆ»

Ամերիկեան յայտնի Wall Street Journal թերթը առանձին յօդուածով անդրադարձած է ԱՄՆ-ի վարչակազմին կողմէ Թուրքիոյ F-16 կործանիչներ վաճառելու մտադրութեան «ճակատագրին»:



Վերլուծաբաններու կարծիքով, այս գործարքը իրականանալու պարագային կը լուծուին ՆԱԹՕ-ի շրջագիծին մէջ 2 դաշնակից պետութիւններու յարաբերութիւններուն մէջ յառաջացած կնճռոտ հարցերը՝ ինչ կը վերաբերի Անգարայի կողմէ ռուսական U-400 ՅՕՊ համակարգեր գնելու եւ Ուաշինկթընի նախաձեռնութեամբ Թուրքիոյ F-35-րդ սերունդի կործանիչներու արտադրութեան միատեղ նախագիծէն հեռացնելու ծրագիրներուն:

«ՀԻՒՐԻԵԹ», «ՅԱՌԱՐԻԿԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ ԿՈՒ ՊԱՅ ՀՀ-ԵՆ ԹՈՒՐԵՒՈՅ ԱՅԼ ՆԱՀԱՆՁՆԵՐ ԵՄ ԹՈՒՉՔՆԵՐ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՐՅՈՒՆ»

Թրքական լրատուամիջոցներ կը յայտնեն, որ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողանի հրահանգով նոր շրջափուլ սկսուած է երկրի արտաքին քաղաքականութեան մէջ:

Ի թիւս արտաքին քաղաքական շարք մը առաջնահերթութիւններու՝ կը նշուի նաեւ Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու հարցով առնուելիք քայլերը:

Իշխանամերձ «Հիւրիէթ» օրաթերթի կայքին վրայ այս նիւթով հրատարակուեցաւ, որուն մէջ մասնաւորապէս ըսուած է.



«Որպէս առաջին քայլ՝ յստակացած է փոխադարձ ուղիղ թռիչքներ սկսելու որոշումը: Յատկապէս Կարսի եւ Վանի մասով կատարուելիք աշխատանքներն ենք, օրակարգ կու գայ տարրեր նահանգներու ուղղութեամբ թռիչքներ կազմակերպելու հարցը: Կարծիքներ կան այն մասին, որ յատկապէս Վանը հայերուն համար կրնայ զբօսաշրջային կեդրոնի վերածուիլ:

Բացի ատկէ, ծրագրուած է Կարսի մօտակայքի որոշ պատմական կառոյցներու, այդ կարգին՝ կամուրջներու եւ այլ շինութիւններու վերակառուցումը: Անոնք հայերուն համար մեծ կարելորութիւն ունին:

Իսկ Հայկական Սփիւռքին ճնշումը նուազ եղնելու նպատակով միաժամանակ կ'ընդլայնին նաեւ առեւտրական յարաբերութիւնները»:

www.kantsasar.com

ՆԱԽԱԳԱՆ... Սկիզբ՝ էջ 4

կետն ու տեսլականները: Անշուշտ կայ անելին, հեռահասը:

Առաջին հերթին, հարց կը ծագի, թէ ո՞վ պիտի ըլլայ յաջորդ նախագահը: Ըստ օրէնքի, նախագահի անժամանակ բացակայութեան պարագային, անոր լիազօրութիւնները կ'անցնին խորհրդարանի նախագահին: Ալէն Սիմոնեանի, իսկ որոշ «նրբութիւններ» նկատի ունենալով, արդէն կը խօսուի, որ փոխ նախագահ Յակոբ Արշակեան պիտի ըլլայ առժամեայ լիազօրութեան օրէնքը նաեւ ժամանակ կը սահմանէ նոր նախագահի մը ընտրութեան համար, պէտք է ըլլայ առաւելագոյն 45 օրուան ժամանակամիջոցին:

Գաղտնիք չէ (եւ հրաժարեալ նախագահը արդէն ողջունած է այս նախաձեռնութիւնը), որ իշխանական խմբակը կը ցանկայ վերատեսութեան ենթարկել Սահմանադրութիւնը. հոս ալ կան զանազան մեկնաբանութիւններ, բոլորն ալ ցոյց կու տան, որ իշխանաւորները կ'ուզեն չափել-ձեւել մայր օրէնք մը, որ անելի եւս ամրապնդէ իրենց հեղինակութիւնը, այլ խօսքով՝ մենատիրութիւնը, ճամբայ հարթէ նախագահական շատ անելի լայն լիազօրութիւններով օժտուած Փաշինեանի մը այս աթոռին տիրանալուն առջեւ: Մինչ այդ, այսինքն՝ Ա. Սարգսեանի հրապարակէն հեռացումով, «Քաղաքական Պայմանագիր»ը պետութեան մէկ այլ զօրակայանն ալ անսքող կ'առնէ իր հակակշիռն տակ, հաշուի առնելով, որ հրաժարեալ նախագահը մաս չէր կազմեր ԶԴ-ական կորիզին, խորքին մէջ, ան «հիներ»էն էր (ընտրուած էր 2018-ի Մարտին, «յեղափոխութեան» նախօրեակին) եւ երկկողմանի լուռ հանդուրժողականութիւն մը գոյացած էր անոնց միջեւ, մինչդէռ Սիմոնեան մը եւ Արշակեան մը մաս կը կազմէ «ուսապարկերու» հիմնադիր խմբաւորումին:

Յաջորդ լիազօր նախագահի ընտրութիւնը կրնայ որոշ (բայց ժամանակաւոր) դժուարութիւններու մատնել իշխանաւոր խմբակը, որովհետեւ նախագահի ընտրութիւնը, առաջին քուէարկութեամբ, պէտք է թեկնածուին ապահովէ 81 ձայն, իսկ ԶԴ-ականներ այդքանը չունին: Սա, բնականաբար, ձեւական խոչընդոտ է, եւ, ինչպէս նշեցինք՝ ժամանակաւոր:

Արդէն բացուած է թեկնածուներու սակարանը: Առաջին «թեւերը սոթտողներն» է «լուսաւոր»ներու մարդը՝ Էտմոն Մարուքեան, որուն բացած ցանկին վրայ վաղը կրնան անելնալ այլ ախորժակատերեր, որոնք Ազգային ժողովի վերջին ընտրութիւններու նախօրեակէն ի վեր ձեւական ընդդիմախօսներ եւ մրցակիցներ են վարչապետին եւ սակայն, բանիւ եւ գործով կը քալեն անոր ցոյց տուած ճամբէն (զարմանալի՞ է, որ «Իմ քայլը» հիմա արդէն յետին բեմ գացած է, բազմաթիւ «քալողներ» իրենց աչքերը վաղուց բացած են եւ հեռացած՝ կործանարար ուղիէն եւ խմբակէն, շատեր միացած՝ արդար ընդդիմադրութեան, սակայն հեռացողներուն փոխարէն կան նոր «քալողներ», որոնք վար չեն դնէր հնամաշ դրօշակը...):

ԵԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԷ ԾԵՂՈՒՄԻ ԱՉԴԱԿ

Այս բոլորէն անդին, կայ անմիջական ուշադրութիւններէ դուրս մնացած մտահոգութիւն մը. վաղը անելի բացորոշ պիտի խօսուի, թէ նախագահին հրաժարականը, դիտումնաւոր թէ ակամայ՝ պատճառ պիտի ըլլայ, որ ազգին ուշադրութիւնը շեղի էական հարցերէն: Եթէ պահ մը այս քայլը դիտենք իբրեւ «գաւաթ մը ջուրի մէջ ստեղծուած փոքրիկ», են մեր աչքերը սեւեռենք դաժան իրականութիւններուն, կրնանք տեսնել, որ նոյն ինքն հրաժարականն ու նոր նախագահի մը որոնումը ստիպողաբար կը խնայեն փուլ մը, որուն մէջ, իրողապէս լուսանցք պիտի քշուին Արցախի գրաւուած շրջաններու, ազերական բնակիչներու Հայաստան թափանցումի (եւ «հայելանման ետք քաշուելու»), տրամաբանութենէ գուրկ՝ սահմանագատման-սահմանագծման, Հայաստանի վրայով Ատրպէյճան-Նախիջեւան-Թուրքիա ցամաքային եւ օդային ճամբաներու բացման, Թուրքիոյ հետ սահմաններու բացման եւ անով պայմանաւորուած՝ Արցախէն, Արեւմտեան Հայաստանէն եւ մէկ խօսքով՝ Հայ Դատէն հրաժարելու, բազմերես հատուցումներու հարցերը: Նման շեղումներ արձանագրուեցան յաճախ, սկսելով... խորհրդարանական ընտրութիւններէն մինչեւ Ալէն Սիմոնեաններու շահատակութիւններէն բարձրացած աղմուկները (հոս ալ չժանրաբեռնուիք անհատում ցանկերով):

Խորքին մէջ, նախագահին հրաժարականը աստիճան մը անելի՛ կը ծանրացնէ ընդդիմադիրներուն ուսերուն ինկած՝ հայրենապաշտպանութեան ու հայրենապահականման առաքելութիւնը, մասնաւոր, ինչպէս յիշատակեցինք արդէն, Հայաստանի անմիջական մերձակայքին եւ անելի հեռու տարածուող՝ աշխարհաքաղաքական քարտեսին վրայ տեղի կ'ունենան իսկապէս վտանգաւոր իրադարձութիւններ, որոնք այլապէս պատճառ են հայութեան, որը հայութեան ուշադրութիւնը շեղելու մե՛ր էական հարցերէն (սա զարմանալի եւ անբնական չէ):

Ընդդիմադիր ճակատները վաղուց ապացուցած են, որ իրագել են մանր ու ամեհի սպառնալիքներուն, վտանգներուն: Կը մնայ, որ մեր ժողովուրդը, ի Հայաստան-Արցախ եւ Սփիւռքի տարածքին բնայ աչքերը, վերջ տայ «հիկի-նորի» քարոզչութեամբ տարուելու թմբիկին եւ ձեռքերը միացնելով՝ լծուի հայրենիքի փրկութեան գործին, կերտէ նոր Սարդարապատ եւ Արցախեան Ազատամարտ: Այս պարագային միայն իմաստ կը ստանան (գոնէ) Ա. Սարգսեանի հրաժարականի վերջին բաժինի այն տողերը, թէ «Այսօր, ինչպէս երբեք, անհրաժեշտ են իմաստայից, խորը մտածում, կշռադատուած՝ բովանդակայից գործողութիւններ: Այլապէս մենք՝ որք աշխարհի հայութիւնը, չենք հասնի մեր առաքելութեան նպատակին եւ կը յայտնուենք պատմութեան լուսանցքում»: Այս տողերը պէտք է դիտենք իբրեւ իմաստացեալ արձագանգ մը՝ ընդդիմադիրներու բազում կոչերուն, որոնք կը ինչ են առ նուազն 44-օրեայ պատերազմէն ետք, ինչպէս նաեւ անկէ առաջ:

2022-Ը «ՍՓԻՌՔԻ ՏԱՐԻ» ՀՈՉԱԿՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ



Կարո Վ. Մասնիկեան

Անցնող հազարամեակին հայ ժողովուրդը ունեցած է քանի մը մեծաթիւ տեղաշարժ, գաղթ՝ անոր պարտադրուած բռնութիւններուն, եղեռններուն... արդիւնքով: Անոնց մէջ յիշատակելի են սելճուքական, թաթար-մոնկոլական, շահ-աբբասական, օսմանական, քեմալական բռնութիւններն ու եղեռնները...: Անոնց որպէս արդիւնք ստեղծուած են նոր գաղթավայրեր, սփիւռքներ, որոնց մեծ մասնն հազիւ հայերու բեկորներ մնացած են, գաղթավայրերու բնակիչներուն մէջ ծուլուելով: Թունք քանի մը հատը՝ Արեւելեան Եւրոպայի, Հունգարիոյ, Լեհաստանի, Տոն-Ռոստով-Նոր Նախիջեանի, Նոր Զուղայի գաղութները:

Օսմանեան Կայսրութեան 20-րդ դարուն, երիտ-թուրքերուն իշխանութեան օրերուն յատկապէս չարդերն ու եղեռնները, յարդի շիւղերու նման, աշխարհով մէկ ցիր ու ցան ըրին եղեռններէն փրկուած Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ հայութիւնը, որ կորսնցուց իր մտաւորական դասը ու թուական մեծամասնութիւնը:

Արեւելեան Եւրոպայի հայկական գաղութները չկան այսօր, անոնց մօտ սկսած է կազմուիլ նոր սփիւռք մը, 20-րդ դարուն սկիզբը կազմաւորուած ԱՄՆ-ներու եւ Ֆրանսայի հայկական սփիւռքը համարեա՛ ուժացման ընթացքի մէջ է: Մնացած են նախկին կամ ծագումով հայերու գանգուած մը: Անոնց գաւակներուն ի՞նչ կոչում պիտի տրուի: Գուցէ ծագումով հայեր, որոնցմէ շատ փոքր թիւ մը ինքզինք հայ կը զգայ:

20-րդ դարու կիսուն եւ վերջին տասնամեակներուն, Միջին-Արեւելքի երկիրներէն եւ մասամբ Հայաստանէն արտագաղթած հայերէն կազմուած են Արեւմուտքի (ԱՄՆ, Ֆրանսա, Զանաթա, Եւրոպա) գաղութները, Ռուսաստանի թէ մերձակայ երկիրներու մէջ կազմուած սփիւռքները բաղկացած են յատկապէս Հայաստանէն գաղթած (նախկին Խորհրդային թէ անկախ) հայորդիներէ:

Վաղուց հոն հաստատուած հայորդիներուն յաջորդ սերունդը դարձեալ ուժացած եւ հալ ու մաշեղած է, իսկ մնացեալին ի՞նչ ճակատագիր կրնայ սպառնալ, որքա՞ն կրնան անոնք դիմադրել հայակոլ վտանգին, իսկ անոնց գաւակները...:

Երեսուն տարի առաջ անկախացած Հայաստանը, ցայսօր, շատ բան կորսնցուցած է իր թուական թէ որակական հզօրութենէն:

Նախքան Մեծ Եղեռնը, ու անոր յաջորդած ժամանակաշրջանին կազմուած Սուրիոյ, Թուրքիոյ հետ սահմանագծին վրայ ցրուած հայաբնակ թէ հայաշատ գիւղերը՝ Արաբունար, Ռաս ուլ Այն, Թել Ապի-

ատ, Տըրպեսիէ, Ազազ, Աֆրին, Մունպուճ, Ռաքքա... եւ այլ շրջաններ չդիմանալով ստեղծուած գաւազան տեղական պայմաններու հայաթափուած են. (Գամիշլի, Հասիչէ, Տերիք հայութեան թիւը նուազած է): Բացի վերջին երեք շրջաններէն, այսօր, սահմանային գիւղերը սուրիական տագնապին հետեւանքով բռնագրաւուած են թրքական բանակին ու անոր հովանաւորած ահաբեկիչ խմբաւորումներուն կողմէ:

Բռնագրաւող Թուրքիան այդ ահաբեկիչներէն ստուար թիւ մը տե-

տարի առաջ էր, երբ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները ըսենք թէ որոշ չափով հարթ էին, երբ տակաւին կը գործէր Սփիւռքի Նախարարութիւնը, կային մշակոյթի ու մարզանքի նախարարութիւնները... Երբ տակաւին «դուխով յեղափոխականները» իշխանութեան գլուխ չէին կանգնած, երբ տակաւին ուժացման ու խորքաթափման գործընթացքի չէին ենթարկուած կրթութեան, արդարադատութեան եւ այլ նախարարութիւններ: Երբ ցեխարձակման չէին ենթարկուած Հայ Եկեղեցին ու ազգային արժեքները չէին ոտնահարուած:

Երբ տակաւին տեղի չէր ունեցած Արցախի 44-օրեայ պատերազմը ու Արցախն ու արցախահայութիւնը չէին կոտորուած: Երբ տակաւին չէր սկսած Հայաստանի Իշխանութեանց ու Թուրքիոյ միջեւ նոր սիւրբանութիւնը:



դափոխեց Ատրպեյճան: Անոնք դարձան այդ երկրի բանակին յառաջապահները Արցախի դէմ սարքուած 44-օրեայ պատերազմին:

Ո՞ր է Ռուճի Հովիտի (Սուրիոյ Իտլիյա Նահանգի) հայութիւնը, ուր գոյութիւն ունէր Առաջնորդանիստ Աթոռ (Շուղուրի մէջ՝ ճրպըր ալ Շուղուրի արեւմուտքը): Անոնցմէ Եւզուպիէ եւ Էնկիզակ հայաթափեղան 2013-ին: Լաթաքիոյ նահանգին մաս կազմող Ղնեմիէ եւ Արամո հայաբնակ գիւղերը (թէեւ արաբախօս հայերէ բաղկացած էին) պարպուած են այժմ:

Նոյնիսկ ծննդավայրս, Զեսապը, անցնող տասնեակ տարիներուն կորսնցուցած է իր թուական եւ որակական արժեքը. ժամանակին հոն կը բնակէին մօտ 6-7 հազար հայեր, այսօր կան հազիւ 1000 հայորդիներ, որոնք կը տոկան (մինչեւ ե՞րբ) Սուրիական պատերազմի՞ այժմ տնտեսական ճգնաժամին, միեւնոյն ատեն ապահովական վտանգներուն եւ անգործութեան սպառնալիքներուն...:

Անցնող տասնամեակին բախտը ունեցած եմ մասնակցելու Հայաստան-Սփիւռք 5-րդ (2014) եւ 6-րդ (2017) համաժողովներուն: Այս վերջին համաժողովի բացման հանդիսութեան խօսք ամենալավ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոս շատ յստակօրէն ընդգծեց, որ «Հայաստանը կը պարպուի, իսկ Սփիւռքը կը մաշի»: Այս տակաւին չորս

«Սփիւռքը կարելի չէ իր ներկայ վիճակին մէջ պահել, Սփիւռքը հրամայական անյետաձգելի կարիքը ունի վերակազմակերպուելու, վերակենսաւորուելու...»:

Ու կ'աւելցնէ.
«... Նախ եւ առաջ Հայաստան պէտք է համոզուի, որ Սփիւռքը բաժնեկից է Հայաստանի հզօրացման, նոյնիսկ կառավարման որոշ իմաստով, այլապէս այս բոլորը զգացական սահմաններու մէջ կը մնան»:

«Նաեւ Սփիւռքը պէտք է ունենայ այն խոր համոզումը, որ ինք ինքնակերտն, ինքնանպատակ գոյութիւն մը չէ, այլ մաս կը կազմէ ամբողջական հայութեան, նաեւ պարտաւորութիւն ունի, պատասխանատուութիւն եւ իրաւունք ունի Հայաստանի նկատմամբ»:

«Սփիւռքի Տարի»՝ հռչակումին առիթով մենք պէտք է անդրադառնանք նաեւ այն իրականութեան, որ հզօր Սփիւռքը կ'ենթադրէ հզօր Հայաստան եւ փոխադարձաբար...»:

«Հետեւաբար մեզի համար Սփիւռքը չի կրնար ինքնանպատակ դառնալ: Անոր կատարած բոլոր աշխատանքները, ծրագրումները հորիզոնին վրայ պէտք է ունենան Հայաստանը»:

Վերոյիշեալ մէջբերումները մէկ փոքր մասը կը կազմեն Վեհափառ Տիրոջ խօսքին:

Ազգային-քաղաքական ուղեգիծի մը նախագիծի ներկայացումն է, ապագայի իմաստով «Ճանապարհի քարտեզ» մըն է Անոր խօսքը:

Վեհափառ Տիրոջ խօսքը, ամբողջական գաղափարներով յագեցած, կը վերաբերի Հայ Ազգի բաղադրիչ բնագաւառներուն ու նաեւ մեզ՝ սուրիահայութեան, ներառեալ լիբանանահայութեան, որոնք կ'անցնին նոյն անման տագնապներէ:

Մեր երկիրները տակաւին չեն թօթափած պատերազմական իրավիճակի ժխտական անդրադարձներն ու արդիւնքները, նոյնիսկ պատերազմը: Անոնց նկատմամբ տնտեսական պատժամիջոցներու վերնագիրին տակ կը կիրարկուի տնտեսական պատերազմ: Ահաւոր պատերազմ, որ անպայման կ'ենթադրէ ընկերային ենթակերտագիր:

Տասնամեայ տագնապին պատճառով, սուրիահայութիւնը, դասական այս Սփիւռքը, այսօր կորսնցուցած է թուական ու որակական իր նախատաղնապի դիմագիծը. ուստի հարցադրումը պարտադիր է՝ ան իր մաս-մաս իրավիճակով ինչպէ՞ս պիտի տոկայ իր դէմ պարզուած գոյատեւման մարտահրաւերներուն: Հարց կու տանք, թէ չէ՞ հասած տակաւին երէկ իր գոյացուցած միասնակամութիւնը (տագնապի առաջին օրերուն) վերանորոգելու, վերակենսականացնելու պահը՝ անդին շարժելով, իրաքանչիւր կառոյցի մասնակի ու առժամեայ լուծումներ որոնելու ժամանակավրէպ մօտեցումը:

2022-Ը «ՍՓԻՒՔԻ...»

Սկիզբ՝ էջ 7

Իւրաքանչիւր կառոյց պահելով իր իւրայատկութիւնը, պէտք չէ՞ մշակել գէթ համաստրիա հայկական նուազագոյն հասարակած յայտարար մը, փոխադարձ հանդուրժողականութեամբ՝ անձնական թէ հաւաքական բնագաւառներու վրայ:

Կը կարծենք, որ սուրիահայութիւնը մէկ ամբողջութիւն է, ոչ թէ հալեպահայութիւն, դամասկոսահայութիւն, լաթաքիահայութիւն եւ այլն, որքան ալ տարբերութիւններ յամենան, բոլորը միասին կը կազմեն լոկ սուրիահայութիւն:

Ակնբախ էր, թէ ինչպէ՞ս տագնապի անցնող տաս տարիներուն ընթացքին Սփիւռքի տարբեր-տարբեր շրջաններ փութացին օժանդակել սուրիահայութեան, սակայն այդ մէկն իսկ չդարձաւ համահայկական լաւապէս կազմակերպուած երեւոյթ:

Սուրիական փորձէն մեկնած կը նկատենք համահայկական ազգային համաձայնութեան մը, Ազգային Ուխտի մը չգոյութիւնը, ազգային հասարակաց յայտարարի մը պակասը, ինչ որ տարբեր նպատակներ կրնար դարձնել անելի լայնածաւալ ու ազդու:

Արդե՞ք երկու տարիներէ ի վեր լիբանանի իմա՛ Լիբանանահայութեան պարտադրուած տնտեսական պատերազմին հայութիւնը կրցաւ հաւաքական, մէկ ու ամբողջական կառոյցով մը նեցուկ կանգնիլ անոր:

Չդիմանալով երկու երկիրներուն պարտադրուած տագնապներուն, տուեալ շրջաններու հայերը խօսքացան, տոգոնացան, տկարացան, մաշեցան:

Այս երկու շրջաններու հայերէն շատեր գացին հարստացնելու Արեւմտեան աշխարհի հսկայական սփիւռքները: Այնտեղ եւս անոնց կազմակերպական իրավիճակը տակաւին դասական է, անտղական եւ ոչ այժմեական: Այլ խօսքով անհամապատասխան օրուան պահանջներուն ու մարտահրաւերներուն:

Անցնող 100-ամեակին, սփիւռքեան անտղական կառոյցները (համայնքներ, կուսակցութիւններ, կազմակերպութիւններ, հայրենակցական միութիւններ, վարժարաններ եւ այլն) կրցան դիմակայել որոշ չափով հայակոյլ ճնշումի վտանգին, հակառակ այն իրողութեան, որ անոնց ճիգերը համահայկական իմաստով հաւաքական չէին: Սակայն 21-րդ դարու պայմաններուն տակ հաւաքական, համակարգուած ճիգի մը բացակայութեան պարագային այդ գոյատեւութիւնը կասկածելի կը մնայ:

Ակնարկ մը նետելով մեր թշնամի երկրին՝ Թուրքիոյ, ընդգծենք, որ անոր կուսակցութիւնները, աշակողմեան թէ ծախակողմեան, ունին հաւաքական ազգային ուխտ մը՝ վերականգնել Օսմանեան Կայսրու-

թիւնը եւ բնաջնջել այդ երթին առաջ կանգնած բոլոր արգելքները:

Այսօր, 21-րդ դարու այս փուլին, երբ աշխարհը այլեւս փակ հաւաքականութիւններու հաւաքածոյ մը չէ, իսկ գերարդիական արհեստագիտութիւնը քանդած է սահմաններն ու պատերը, մեր դասական, հնամենի ոճով գործող կառոյցները սկսած են յուժապետս վատնել ու մսխել իրենց ներուժը, մանաւանդ երիտասարդներու ուժը: Ժամանակի թաւալումով այդ ներուժը լուսանցքի վրայ կը տեղադրուի:

Վեհափառ Տիրոջ արտասանած խօսքը այդ դռնն ալ կը բախէ, մարտահրաւեր կարդալով որ նոր, երիտասարդ այդ ներուժը վերակազմակերպուի, օժտուած 21-րդ դարու հնարաւոր արհեստագիտութեան զէնքերով, դիմակայելու մեր ազգին առջեւ պարզուած մարտահրաւերները:

Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին, ԱՄՆ-ներ բնակող, ոչ հայախօս՝ անգլիախօս երիտասարդներու ինքնակազմակերպ խմբակ մը, յաջողած էր դիմատետրի էջերուն վրայ երեւցող ազերի պարսաւող ու հայհոյող «աքթիւստները» տուգանել (օգտուելով ելեկտրոնային համացանցի տեսակաւոր կարելիութիւններէն), եւ այդ հասոյթը տրամադրել գոյապայքար մղող հայոց բանակին:

Վերոյիշեալ «տեսակի» հայօրէն ապրող, բայց օտարախօս երիտասարդներու փառանք մը կայ փաստօրէն, օժտուած գիտութեան ամեն տեսակի կարելիութիւններով, որ սակայն հեռու մնացած է ազգային, հայկական մեր կառոյցներէն. դասական կառոյց ունեցող կազմակերպութիւններ ունի՞ն կարելիութիւններ գանոնք վերածելու «դիմադրական բանակի» մը: Պէտք է ունենան այլեւս:

Այս գծով եւս դիպուկ է Վեհափառին մատնանշումը:

Հապա ի՞նչ ըսել Ռուսաստանի խորքերը բնակող հայ հաւաքականութեանց մասին, որոնք տեղւոյ՝ հիւսիսային ձեւն սման կամաց-կամաց կը հալչին:

Հայաստան-Սփիւռք 5-րդ համաժողովին (2014 Սեպտեմբեր) հանդիպեցայ ռուսական քաղաքի մը բնակիչին: Ան յայտնեց, որ այնտեղ կը բնակին 14 հայ ընտանիքներ, որոնք հանգանակած էին 1400 ամ. տոլար եւ ուղարկած նոր ազատագրուած Քեսապ (14 Յունիս 2014):

Այս ալ մաս չի՞ կազմեր նորաստեղծ Սփիւռքին՝ իր ներուժով համատեղ:

Վեհափառը կը մատնանշէ, թէ Սփիւռքը մէկ մասն է ամբողջական հայութեան: Կը նշէ թէ «Սփիւռքը պարտաւորութիւն, պատասխանատուութիւն եւ իրաւունք ունի Հայաստանի նկատմամբ»:

Հարց կը տրուի, Սփիւռքը որքանով կատարած է իր պարտաւորութիւնները Հայաստանի հանդէպ: Գուցէ, անհատական ու երբեմն մեծածաւալ նպաստած, սակայն այդ եղա՞ծ է համահայկական-համասփիւռքեան ծրագրումով, իրագոր-

ծումով: Իսկ Հայաստան որքանով՞ իրաւունք տուած է Սփիւռքին, որ պարտաւորութեանց իրաւունք ունենայ անոր հանդէպ:

Ակամայ կը վերյիշեմ սփիւռքահայութեան երկքաղաքացիութիւն տալու օրէնքի որդեգրման քաջքշուքները: Արդե՞ք միայն երկրաշարժի մը, պատերազմի մը պարագային պէտք է ունենանք ճիգերու մէկտեղում, (հազիւ կազմակերպուած):

Քառօրեայ պատերազմի օրերուն, թէ 44-օրեայ պատերազմի օրերուն Սփիւռքն ալ ունեցաւ իր ներդրումը հաւաքական ինքնապաշտպանման ճիգին: Ունեցաւ իր նահատակները, անկախ այն իրողութենէն թէ Հայաստանի իշխանութիւնները ինչպէս ոտնահարեցին այդ մասնակցութիւնը: Դարձեալ հարցադրում կը կատարեմ. որքանով՞ համահայկական կազմակերպուած ճիգի մը արդիւնք էր այդ մասնակցութիւնը:

Վեհափառը կը հաստատէ «Սփիւռքը չի կրնար ինքնանպատակ դառնալ: Հօգոր Սփիւռքը կը կշռանալէ հօգոր Հայաստանն է փոխադարձաբար: Անոր կատարած բոլոր աշխատանքները, ծրագրումները հորիզոնին վրայ պէտք է ունենան Հայաստանը»: Ապա ան կը բացայայտէ, որ կոչ ուղղած է համագային խորհուրդ մը կազմելու, որուն ճամբով տարբեր հարցեր պիտի քննուին:

Մերժելով, որ Սփիւռքը ներքաշուի Հայաստանի ներքին հարցերուն ու միջամուխ ըլլայ անոնց, Վեհափառ Տէրը կ'ընդգծէ որ «Համահայկական հարցերու գծով Սփիւռքը հետեւողի, դիտողի, կրաւորական վիճակի մէջ պէտք չէ ըլլայ, այլ մասնակցողի տեսակէտ ունեցողի դերին մէջ ըլլայ»:

«Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները, Արցախի հարցը, վերջին պատերազմին վերաբերող

հարցերը համահայկական մտածողութիւն, կեցուածք եւ մասնակցութիւն կ'ենթադրեն»:

Հարցը այստեղ կը վերաբերի հայկական պահանջատիրութեան, միացեալ հայրենիքի մը կերտման իրամայակականութեան, որոնցմէ գիշումի իրաւունքը չի վերաբերիր ոչ ոքի:

Վերջապէս այլ տեղ ան կը յայտնէ թէ «Սփիւռքի Տարի» հռչակումը պէտք չէ թողու այն տպաւորութիւնը, որ փորձ պիտի կատարուի Սփիւռքը անջատելու, կղզիացնելու ու մեկուսացնելու Հայաստանէն:

Վերի տողերուն մէջ արձանագրեցինք արդէն, որ Վեհափառին խօսքը, նախագիծ մըն է, «Ճանապարհի քարտէզ» մըն է: Անոր վրայ բան անելցնելու յաւակնտութենէ հեռու, փորձ մըն է գրութիւնս մեր՝ սուրիահայութեան իրականութեան տեսանկիւնէն քննելու արժարժուած գաղափարները, որոնք որքան իրապաշտ, որքան անհրաժեշտ իրամականներ են:

Միջազգային մեծապետական հաշիւներու տրեխներուն տակ տրորուող սուրիահայութիւնը իր գոյութիւնը պահպանելու ու համահայկական մեծ տեսլականը իրագործուած տեսնելու ճամբուն Վեհափառին «Սփիւռքի Տարուան» հռչակագիրը մղիչ ուժ կը հանդիսանայ ինչպէս սուրիահայութեան, այնպէս ալ համայն հայութեան, որ նոր ոճով, հայկական հարագատ խորքով գոյատեւելու եւ գործելու ծրագիր մշակել:


Յատկապէս երիտասարդութիւնը պէտք է ըմբռնէ ու իւրացնէ հռչակագիրը, եւ անոր պարունակած գաղափարները, գանոնք ի գործ դնելու իրամայականով:

Կը յուսանք ականատեսն ու ականջալուրը ըլլալ հռչակագիրի գաղափարներուն ու ոգին գործնական քայլերու իրագործման:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ

ԱՌԱՔԵԼ ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ




Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 30 Յունուար 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Սահակ Նալպանտեան» նախկին «Տիգրանեան» սրահէն ներս:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ

ԳՐԻԳՈՐ ՄԻԽՍԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 30 Յունուար 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին քրոջը բնակարանէն ներս:

ՏԵՐ ԶԱՐԵՀ ՔՀՆՅ. ՇԱՔԱՐԵԱՆ. «ԱՐԵՒԻԿ» ԿԵԴՐՈՆԸ ԲԱՐԵՆՊԱՍՏ ԴԵՐ ՈՒՆԵՑԱԲ ՇՆՈՐՀԻԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԽՆԱՄՔԻՆ, ՅԱՐԳԱՆՔԻՆ ԵՒ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ»

Հալեպի մէջ, Նախքան պատերազմը, մարդասիրական բազմաթիւ կեդրոններու կողքին կը գործեր յատուկ խնամքի կարիք ունեցող հայ երեխաներու «Արեւիկ» կեդրոնը: Կեդրոնը, ինչպէս Հայ Ծերանոցը, բախումներու կիզակետին մէջ յայտնուելով կիսաքանդ դարձաւ, իսկ կահոյքը ամբողջութեամբ գինեալ ահաբեկիչներու կողմէ թալանուեցաւ: Կատերազմի տարիներուն:

Ներկայիս «Արեւիկ»-ի մարդասիրական գործունեութիւնը կը շարունակուի կառոյցէն դուրս:

Մարդասիրական այս կարեւոր աշխատանքին ծանօթանալու համար, «Գանձասար» հարցազրոյց մը ունեցաւ «Արեւիկ» կեդրոնի խնամակալութեան ատենապետ Տեր Զարեհ Զահանայ Շաքարեանի հետ:

«Գանձասար»- ինչպէ՞ս ծնունդ առաւ «Արեւիկ» կեդրոնը եւ որքանո՞վ ծառայեց իր նպատակին:

Զարեհ Զահանայ Շաքարեան - Յատուկ խնամքի կարիք ունեցող երեխաներու «Արեւիկ» կեդրոնը ծնունդ առաւ հայ ընտանիքներու անմիջական կարիքներուն թելադրութեամբ: Բերիոյ Հայոց Թեմի օրուան Առաջնորդ Գեղ. Տ. Սուրեն Սրբ. Արք. Գաթարոյեանի կարգադրութեամբ Հալեպի հայ երեք համայնքապետներու հովանաւորութիւնը վայելող կեդրոնը ծնունդ առաւ 1 Հոկտեմբեր 2000-ին, Պոստան Փաշա շրջանի Հայ Ծերանոցի հողաշերտին վրայ: Երեք համայնքներու կողմէ կազմակերպուած խնամակալութիւնը հօր նման կը հսկեր կեդրոնի գործունեութեան եւ իր անխնայ աշխատանքով միշտ սատար կը կանգնէր «Արեւիկ»-ին:



Կեդրոնը օրէ օր զարգացաւ: Սկզբնական շրջանին ան ունեցաւ 15 աշակերտ, հետագային թիւը հասաւ 25-ի: Կեդրոնը ուներ կամաւորաբար ծառայող իր տնօրէնուհին եւ ուսուցչական կազմը, որոնք կողքին պաշտօնէութիւն եւ յատուկ փոխադրակառք: Կը գործեր շաբաթական հինգ օրերու դրութեամբ, մասնագիտական ծրագիրով:

«Արեւիկ»-ի հիմնադրման նպատակը մարդասիրական էր: Տան մէջ փակուած եւ խնամքի կարիք ունեցող երեխաները համախմբելու եւ գիրենք ներգրաւելու մեր ընկերութեան մէջ, իսկ թերաճ մանուկները դաստիարակելու մանկավարժական յատուկ ծրագիրներով, միաժամանակ զիրենք վարժեցնելու անձնական հոգատարութեան, որպէսզի դառնան ինքնավստահ, ինքնաբաւ, իսկ նման պարագաներ ունեցող ընտանիքները չպահել ամօթխածութեան զգացումէ տառապողի հոգեվիճակին մէջ, այլ զարգացնել անոնց մարդասիրական ոգին եւ յանդուութիւնը:

«Արեւիկ»-ի հիմնադրման նպատակը մարդասիրական էր: Տան մէջ փակուած եւ խնամքի կարիք ունեցող երեխաները համախմբելու եւ գիրենք ներգրաւելու մեր ընկերութեան մէջ, իսկ թերաճ մանուկները դաստիարակելու մանկավարժական յատուկ ծրագիրներով, միաժամանակ զիրենք վարժեցնելու անձնական հոգատարութեան, որպէսզի դառնան ինքնավստահ, ինքնաբաւ, իսկ նման պարագաներ ունեցող ընտանիքները չպահել ամօթխածութեան զգացումէ տառապողի հոգեվիճակին մէջ, այլ զարգացնել անոնց մարդասիրական ոգին եւ յանդուութիւնը:

«Գ.»- 2012-ին, կեդրոնի շրջանը անապահով ըլլալուն եւ հետագային վնասուելուն բերումով աշխատանքը որոշ շրջան մը դադարեցաւ: Ինչպէ՞ս կարելի եղաւ վերաշխուժացնել գայլ:

Տ. Ք. Շ. - Երբ պատերազմը սկսաւ, կեդրոնի շրջանը կը նկատուէր անապահով: Շրջան մը վերջ ահաբեկիչներ ներխուժեցին շրջան եւ կեդրոնը վնասներ կրեց, հանրակառքը, որ «Արեւիկ»-ի աշակերտութեան տրամադրուած էր եւ աշակերտներուն կը ծառայէր գողցուեցաւ: Այդ օրերուն ունեինք 26 աշակերտ: Ուսուցչական կազմը մեծամասնութեամբ ճամբորդեց, իսկ աշակերտութեան մեծ մասը իր ընտանիքին հետ փոխադրուեցաւ Հայաստան:

Պատերազմէն ետք ունեցանք 10 աշակերտներ, զորս մինչեւ այսօր կը համախմբենք, սակայն ոչ նախկինին նման ամբողջապէս դրութեամբ ու ամբողջական անձնակազմով: Մանուկները շաբաթական դրութեամբ կը հաւաքուին Ազգ. Կիւլպէնկեան վարժարանէն ներս, իրենց տրամադրուած է դասարան մը, ուր ուսուցչական կազմին կամաւոր ծառայութեամբ կը կիրարկուին ուսուցողական յատուկ խաղեր եւ բազմաթիւ այլ ծրագիրներ:

Կը կազմակերպենք ձեռնարկներ, ինչպէս՝ Կաղանդ, Մայրերու տօն եւ Ս. Չատկուան տօնախմբութիւն:

Այս տարի կազմակերպեցինք տարեկան բանակում մը Քաֆրուն շրջանին մէջ: Շատ հաճելի եւ օգտաշատ էր ծրագիրը, նկատի առնելով աշակերտութեան գոհունակութիւնը եւ կազդուրումը: Ծնողներուն վկայութեամբ, բանակումը շատ դրական ներգործութիւն ունեցաւ իրենց առողջութեան եւ հոգեկան աշխարհին վրայ:

Խնամակալութիւնը մտադիր է բանակումի այս ծրագիրը կրկնել ամեն տարի:

Հալեպահայութեան կողմէ մեծ հետաքրքրութիւն կայ այս աշխատանքին նկատմամբ: Բարոյական եւ նիւթական աջակցութեան կողքին, կ'ունե-

նանք նուիրատուներ, որոնք ներդրումով կը կազմակերպենք աշակերտներուն յատուկ պտոյտներ, նախաճաշեր եւ ամանօրեայ նուէրներ: Խնամակալութիւնս երախտապարտ է բոլոր նուիրատուներուն, որոնք առանց ակնկալութեան կը գորակցին «Արեւիկ»-ի աշակերտներուն:

«Գ.»- Ներկայ պայմաններուն մէջ խնամակալութիւնը ինչպէ՞ս կը գործէ: Ինչպիսի՞ ծրագիրներ ունի, իսկ աշակերտութիւնը ինչպիսի՞ կարիքներ ունի:

Տ. Ք. Շ. - Խնամակալութիւնը կը գործէ համերաշխութեամբ, հայ երեք հոգեւոր պետներուն հովանաւորութեամբ: Պատերազմէն ետք, Սուրիոյ Նախագահական պալատը մարդասիրական աշխատանք տանող մարմիններու հետ հանդիպում ունեցաւ: Այս առիթով, «Արեւիկ» կեդրոնը Սուրիոյ Առաջին Տիկնոջ յատուկ ուշադրութեան արժանացաւ: Առաջին Տիկնոջ Նախքան պատերազմը մշտապէս նեցունկ կը կանգնէր եւ կը քաջալերէր աշակերտութիւնը: Անոր առաջարկով մեր կեդրոնի աշակերտութիւնը մասնակցած է ողիմպիական խաղերու եւ Սուրիոյ մակարդակով առաջին դիրքը գրաւած է: Այդ օրերուն մեր աշակերտները Առաջին Տիկնոջ ձեռամբ պարգեւատրուած են «Արեւիկ» կեդրոնէն ներս:

Ներկայիս աշակերտութիւնը կարիք ունի նման հաւաքներու, ծրագիրներու, ինչպէս նաեւ նիւթական եւ բարոյական քաջալերանքի: Ուրախութեամբ կ'ուզեմ յիշել, որ Ամանորին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին ձեռամբ, յատուկ բարերարի մը կողմէ նուէրներ յանձնուեցան աշակերտներուն:

Մեր ժողովուրդը գիտակից է ու հոգատար: Հայ Ծերանոցի, Ազգ. Պատրւապարանի եւ «Արեւիկ» հաստատութեան նկատմամբ իր նիւթական եւ բարոյական աջակցութիւնը չի զլանար: Այս իսկ պատճառով մեր ծրագիրները յաջողութեամբ կը պսակուին եւ կեդրոնի աշակերտները մեր բոլորին ուշադրութեան կիզակետին մէջ են:

Հարցազրոյցը վարեց Ժիրայր Կարապետեան

ՀՅԴ ՀԱՅ ՂԱՏԻ...

Սկիզբ՝ էջ 3

Կը ցաւինք, որ Հայաստանի վարչապետը կ'ամ այնքան անպատրաստ է, որ չի գիտեր, կ'ամ միտումնաւոր խելագիրութեամբ է ինքնորոշման իրաւունքի եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքի յարաբերակցութիւնը միջազգային իրաւունքին մէջ: Ինքնորոշման իրաւունքի եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքի յարաբերակցութեան վեճը անելի յստակացած է Արդարադատութեան միջազգային դատարանի՝ միջազգային իրաւունքի շրջանակին մէջ Քոստովոյի կողմէ անկախութեան միակողմանի համապատասխանութեան մասին 22 Յունիս 2010-ի խորհրդատուական որոշումով: Աւելի չխորանալով այդ որոշման իրաւաբանական ծալքերուն մէջ՝ միայն նշենք, որ Դատարանը ուղղակիօրէն արձանագրած է՝ «տարածքային ամբողջականութեան սկզբունքի կիրառման ոլորտը կը սահմանակալուի ճանկարկութեան սկզբունքի կիրառման ոլորտով»:

Իբրեւ եզրակացութիւն՝ Դատարանը ընդունած է, որ միջազգային իրաւունքը չ'արգիլէր անկախութեան միակողմանի հռչակումները: Աւելին, ՄԱԿ-ի Կանոնադրութեամբ սահմանուած՝ իրաւունք եւ սկզբունք հասկացութիւնները իրարմէ կը տարբերին, եւ սկզբունքները միտուած են իրաւունքներու ապահովութեան, ոչ թէ հակառակը: Դե-

տեաբար, տարածքային ամբողջականութեան սկզբունքը եւ ինքնորոշման իրաւունքը հակադրուիլ չ'են կրնար, իսկ Արցախի Հանրապետութեան եւ Ատրաբեյճանի Հանրապետութեան միջեւ տարածքային ամբողջականութեան հարց յառաջանալ առաջատար չի կրնար, քանի որ, ինչպէս արձանագրած է Արդարադատութեան միջազգային դատարանը, տարածքային ամբողջականութեան սկզբունքը կրնայ կիրառուիլ իրարու ճանկարկութեան սկզբունքներէն պետութիւններու միջեւ յարաբերութիւններուն մէջ:

Այսպիսով, փոխանակ օգտուելու Թուրքիոյ եւ Ատրաբեյճանի հետ յարաբերութիւններուն մէջ հայկական կողմի դիրքերը ամրապնդող առարկայական հանգամանքներէն, ՀՀ իշխանութիւնները, անկարող ըլլալով աստիկա ընել, ամբողջապէս կը կատարեն ատրաբեյճանաթրքական թեզերու ամօթալի կրկնութիւնը, իսկ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու հաստատման գործընթացին մէջ բաւարարած են թրքական յայտնի նախապայմանները:

ՀՀ-ի Հայ Դատի աշխարհասփիւռ կառոյցը, անկախ Հայաստանի իշխանութիւններու պարտադրական ու ամօթալի դիրքորոշումներէն, կը շարունակէ մեր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութիւնը՝ այն վստահութեամբ, որ այդ իրաւունքներու պաշտպանութիւնը չի կրնար պայմանաւորուած ըլլալ անցողիկ եւ ապաշնորհ իշխանութիւններու գոյութեամբ»:

ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Անձնական ու սիրային առումով հաճելի անակնկալներ կը սպասեն ձեզ, բայց եւ այնպէս հանդարտ եղէ՛ք, ծայրայեղ դրսեւորումներ մի՛ ունենաք:



ՏՈՒԼ

Մեծ գնումներ մի՛ ընէք կամ նիւթական մեծ ներդրում ենթադրող նախաձեռնութիւններու մի՛ դիմէք: Շաբաթը լեցուն է հակասութեամբ, շփոթի վիճակով եւ լարուածութեամբ:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Նիւթական արժեքաւոր նուրբ կամ աշխատավարձի չակնկալուած յաւելում պիտի ստանաք: Դրական փոփոխութիւններէն օգտուեցէ՛ք եւ գանգատը մէկդի դրէ՛ք:



ԽԵՑՁԵՏԻՆ

Եթէ կը գգաք, որ կարգ մը ծրագիրներ չեն յաջողիր կամ տեղայլի մէջ են, կարգ մը կէտեր վերատեսութեան ենթարկեցէք եւ թարմութիւն բերէք: Պիտի յաջողիք քիչ մը ճիգով:



ԱՌԻԾ

Դուք ձեզի հետ պայքարի մէջ էք, ներքին անհանգստութիւն մը ունիք, բայց համբերութեամբ, լաւապէս մտածելով պիտի կարենաք դուրս գալ այս վիճակէն:



ԿՈՅՍ

Մրցակիցներ ունիք. գանոնք պարտութեան մատնելու եւ գրաւը շահելու լաւագոյն առիթն է այս շաբաթ: Խաղի կանոնները յարգեցէ՛ք, որպէսզի յաղթանակը ամբողջական ըլլայ:



ԿԵՒՈՔ

Ձեր շրջապատին հետ հասկցուելու դժուարութիւն պիտի ունենաք: Փորձեցէ՛ք չզղայնանալ, որպէսզի հարցերը ձեր հակակշռին տակէն դուրս չգան ամբողջովին:



ԿԱՐԻՃ

Եթէ նիւթական հարց մը կայ, առանձին պատասխանատուութիւն մի՛ ստանձնէք, որովհետեւ այդքան չէք կրնար տանիլ, մանաւանդ ներկայ դժուար օրերուն:



ԱՂԵՂԱՊՈՐ

Ձեր ապագան ու նիւթական վիճակը կը մտահոգ են ձեզ, սակայն ուրախ լուր մը պիտի փոխէ կացութիւնը, լուծում պիտի առաջարկէ բարդ իրավիճակին:



ԱՅԾԵՂՋԻՐ

Տօնական մթնոլորտ մը, ընկերային հաճելի համախմբում մը կամ ընտանեկան մտերմիկ հաւաքոյթ մը պիտի ունենաք այս շաբաթ:



ՋՐՅՈՍ

Ամսուան լաւագոյն շաբաթներէն մէկն է: Պայմանները ի նպաստ ձեզի պիտի ընթանան, ճիշդ կողմնորոշուելու ձեր կարողութիւնը պիտի գարգանայ, շրջապատը դրական ներդրում պիտի ունենայ ձեր առօրեային մէջ:



ՋՈՒԿ

Անհամբերութեամբ եւ խանդավառութեամբ կը պատրաստուիք տօնական ընթրիքի մը՝ փորձելով ամէն ինչ կատարել ընել: Շատ յաջող եւ ուրախ արդիւնք պիտի ունենայ ձեր աշխատանքը:



ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ ՏՄՆՏԻԿԻՆԻՆ

-Տան բոյսերուն տերեւները ամիսը անգամ մը շփեցէ՛ք նարինջի կեղեւով, որպէսզի ձեր սիրելի փիսիկը հեռու պահէք անոնցմէ:

-Արդէն 80-ական թուականներէն ՆԱՍԱ-ն փաստած է, որ կարգ մը բոյսեր ապակեանսած օդը մաքրելու յատկութիւն ունին: Դետեաբար թելադրելի է, որ տան տարբեր անկիւնները բաղդելի եւ «կետուր մամայի լեզու»-ի թաղարներ գետեղէք վերոյիշեալ բոյսերուն յատկութիւններէն օգտուելու եւ տան օդը մաքուր պահելու համար:

-Այրած քիմքին արագ դարման գտնելու համար, եթէ տունը գիւնի ունիք, մեծ ումպ մը ձեր բերնին մէջ որոշ ժամանակ մը պահեցէ՛ք: Սառոյցի կտոր մը նոյնպէս կրնայ մեղմել ցաւը: Նոյնքան ազդու է աղի ջուրով բերնի ողողումը:

-Ծորակները մաքրելու եւ փայլեցնելու համար օգտագործեցէ՛ք ակռայի դեղը: Մածուկով շփեցէք ծորակը, առատ ջուրով ցողուեցէ՛ք եւ մաքուր, չոր լաթով մը փայլեցուցէ՛ք:

-Ձեռքերուն վրայէն ձուկի, սոխի, ծխախոտի անախորժ հոտէն ձերբազատելու համար գանոնք շփեցէ՛ք կիտրոնով, սուրճի մրուրով կամ *պէյքիկ* սոտայով:

-Նախքան խաշած հաւկիթը շերտելը՝ դանակին շեղբը տաք ջուրին մէջ դրէ՛ք եւ յետոյ կտրեցէ՛ք. այսպիսով հաւկիթը դանակին չի փակչիր եւ կանոնաւոր շերտեր կը ստանաք:

-Որպէսզի մոմ վառելու ատեն ձեր մատները չայրէք, պարզապէս օգտագործեցէ՛ք սփալտաթիւն ձողիկ մը:

-Որպէսզի մոմերը երկար դիմանան եւ շուտով չհալին ու չսպառնան, գանոնք սառցարանը պահեցէ՛ք:

-Եթէ կ'ուզէք, որ ձեր սառոյցները թափանցիկ ըլլան, նախքան սառցամաններուն մէջ լեցնելը՝ ջուրը եռացուցէ՛ք, քանի որ այդ ընթացքին ջուրը կը բիւրեղանայ եւ կը մաքուրի մանր-մուկը աղտերէ եւ օդի մնացորդէ:

-Եթէ կ'ուզէք, որ բաղնիքը անուշ բուրէ՛ առանց ծանր հոտով սփրելներ օգտագործելու, ընտրեցէ՛ք ձեր ճաշակին համապատասխանող *ուիլ էսանսիել* կոչուած, պզտիկ սրուակներով վաճառուող հեղուկները եւ անկէ քանի մը կաթիլ կաթեցուցէ՛ք բաղնիքի թուղթին խաւաքարտին վրայ:

-Եթէ կ'ուզէք, որ ձեր գունատած ճերմակ ասեղնագործերը կրկին դառնան կատարեալ սպիտակ, կաթային մէջ ջուր տաքցուցէ՛ք, աւելցուցէ՛ք 2 ապուրի դգալ փոշի կաթ, խառնեցէ՛ք եւ գաղջ կաթին մէջ առնուազն մէկ ժամ թրջեցէ՛ք ձեր ասեղնագործը: Ժամ մը ետք գայն չորցուցէ՛ք բացօթեայ՝ սեղանի մը վրայ տարածելով:

-Պնակեղէն, լուալու սպունգները մանրէի բոյն են: Չանոնք քանի մը վայրկեան մանրալիքին մէջ դրէ՛ք, եւ մանրէներուն 90 տոկոսը կը չքանայ:

-Մկրատը սրելու համար առէ՛ք աւազաթուղթի կտոր մը եւ գայն կտրտեցէ՛ք, մկրատին բթացած շեղբերը շուտով կը գտնեն իրենց նախկին վիճակը:

ՎԱՌԷ՛, ԿՐԱԿ ՄԵՆ ԱԼ ԴՈՒՆ ՎԱՌԷ՛

Իգնա Սարգսյան



Մարած կրակներու մոխիրներով մի՛ գբաղիր Նոր կրակ մըն ալ դո՛ւն վառէ

Դեղնած տերեւներով մի՛ պարապիր Թօշնած ծաղիկներով մի՛ տագնապիր Նոր ծառ մը - Նոր ծաղիկ մըն ալ դո՛ւն տնկէ

Հին առասպելներու հոսանքն ի վեր մի՛ նաւարկեր Նոր դիւցազներգութիւն մըն ալ դո՛ւն կերտէ Նոր հերոս մըն ալ դո՛ւն ստեղծէ

Լուռ հրաբուխներու գագաթին թառած Լիճերուն մէջ մի՛ լողար Հրաբուխ մըն ալ Նոր հրաբուխ մըն ալ Նոր հրաբուխ մըն ալ դո՛ւն եղիր Եւ գաղափարի լաւաներով խաւարները փարատէ՛

Ժանգոտած կրպանքներով մի՛ մաքառիր Փակ դռներով մի՛ պայքարիր Լուսաւոր հորիզոններու վրայ բացուող Նոր դուռ մըն ալ դո՛ւն եղիր

Մարած կրակներու մոխիրներով մի՛ գբաղիր Մի՛ վարանիր - վառէ՛ Ծրագ մըն ալ Կրակ մըն ալ դո՛ւն վառէ:



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ պասքեթի ախոյեանութեան Բ. դասակարգի մրցումներուն, ՅՄԸՄ-ի տղոց խումբը 58 - 72 արդիւնքով կրեց իր 5-րդ պարտութիւնը, զիջելով Մահարտէին:

- Սուրիոյ Պասքեթի Դաշնութիւնը իրապարակեց Զալէպի պասքեթի Ս-16-ի տղոց հաւաքականի ցանկը, որուն մաս կազմեցին ՅՄԸՄ-ի խումբէն Գօգօ Չգուշեանն ու Շանթ Օգճեանը, իսկ ԶԵԸ-ի խումբէն՝ ճորճ Գալայճեանն ու Պօղոս Տատաղեանը:

- Սուրիոյ Ֆութպոլի Զաւաքականը Ուրբաթ օր ժամանեց Տուպայ, ուր մէկ շաբթուան տեւողութեամբ պիտի կատարէ ուսումնամարզական հաւաք մը: Զաւաքականը Տուպայի մէջ պիտի մասնակցի համաշխարհային գտման մրցումներու երկու հանդիպումներու՝ Իմարաթի եւ Զորիայի կազմերուն հետ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼ ԶԱՄԱՐՈՒԹԵԱՄԲ ԱՄԱՐՏԵՑ ԷԼՉԵՅԻ ԶԱՆԴՊՈՒՄԸ

Սպանիոյ ախոյեանութեան 22-րդ փուլի մրցումներուն, Ռեալ Մատրիտ Էլչէյի հետ մրցումը աւարտեց 2 - 2 հաւասարութեամբ: 33-րդ վայրկեանին, Ռեալ ստացաւ տուգանային հարուածի իրաւունք, սակայն ֆրանսացի յարձակող Քարիմ Պենզեման չկրցաւ նշանակել գոլ:



2009-Էն Ռեալի հետ հանդէս եկող Պենզեման առաջին անգամն է, որ կը ծախուի տուգանային հարուածի իրաւորման մէջ: Ան մինչ օրս յաջողած է նշանակել 16 տուգանային

հարուած: 42-րդ վայրկեանին Էլչէյ նշանակեց իր առաջին կոլը Լուկաս Փոնի միջոցաւ, իսկ կիսախաղը աւարտին հասաւ 1-0 արդիւնքով: 76-րդ վայրկեանին Էլչէյի կազմէն Պերե Միլեան կրկնապատկեց արդիւնքը: 82-րդ վայրկեանին Ռեալի երկրորդ տուգանային հարուածը դարձաւ արդիւնաւետ եւ Լուքա Եովիչ նշանակեց առաջին գնդակը: Արքայական խումբի խաղացող Միլիթաուս հանդիպումի յաւելուած ժամանակաշրջանին նշանակեց հաւասարութեան կոլը եւ փրկեց խումբը պարտութենէ:

ԱՐՄԵՆԱԼ ՄՏԱԴԻՐ Է ԵՐԿԱՐԱԶԳԵԼ ՄԻԿԵԼ ԱՐՏԵՏԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Daily Mail-ը տեղեկացուց, որ Լոնտոնի Արտենալը մտադիր է երկարաժամկէտ խումբի գլխաւոր մարզիչ Միկել Արտետայի հետ պայմանագրութիւնը: Անգլիական ակումբի ղեկավարութիւնը կը փափաքի 39-ամեայ սպանացի մասնագետին հետ կնքել նոր պայմանագրութիւն, որ նախատեսուած է մինչեւ 2025 թուական: Արտետայի գործող պայմանագրութիւնը մինչեւ Յունիս 2023 կ'երկարի:

Միկել Արտետա Արտենալը գլխաւորած է Դեկտեմբերին 2019-ին, հեռանալով Մանչեսթըր Սիթիէն: Ան Մանչեսթըրի գլխաւոր մարզիչ Կուարտիլայի օգնականն էր: Արտետայի ղեկավարութեամբ Արտենալը նուաճած է Անգլիոյ գաւաթն ու սուպըրգաւաթը: Անգլիոյ ընթացիկ առաջնութեան 20 խաղերէն ետք, Արտենալը 35 կէտով կը գրաւէ 7-րդ դիրքը:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 375)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1				■								
2									■			
3			■			■	■	■				
4						■						
5								■			■	
6					■							
7	■						■	■	■			
8	■										■	
9			■			■	■	■				
10										■		
11		■					■	■	■			
12												

Յորիզոնական

- Պչրանք: Գովասանք:
- Անսպասելի դէպք: Բաջ:
- Տառի մը անունը: Զակառակ՝ իրերայաջորդ տառեր: Մարմինը՝ մէջքէն վեր, առանց թելերուն ու գլուխին:
- Զակառակ՝ 54: Չայնաւոր տառեր: Զակառակ՝ գիւղաքաղաք:
- Մէկը: Թուր: 82:
- Եական բայ: Դատարկ:
- Միջնադարեան անառիկ բերդ, որ կը գտնուի ձորագետի ձախ ափին: Զիմն:
- Բնութիւնը ծածկող ձմեռնային վիճակ:
- Որովիտեւ: 460: Տարածքի միաւոր:
- Զասարակ ժողովուրդի պատկանող: Կրկնուած բաղաձայններ:
- Գիրի եւ դպրութեան աստուածը: Զակառակ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին հայրը:
- Զայ երգիծաբան:


Ուղղահայեաց

- «Սպանուած Աղանի» վիպակին հեղինակը: Զակառակ՝ համացանցային հայկական ձայնասփիւռ:
- Նգովք: Երիվար:
- Տառի մը անունը: Արական անուն: 4600:
- Բեմադրիչ Միեր Մկրտչեանի ֆիլմերէն:
- Մկան: 1400: Արական անուն:
- 5060: Ցամաքամաս մը:
- Չայնաւոր տառեր: Իգական անուն:
- 7030: Յարմար:
- Գիշատիչ կենդանի մը: Իրերայաջորդ տառեր: Զակառակ՝ 4060:
- Օտար տեղեր բնակող: Զակառակ՝ հայկական մականուններու վերջավանկը:
- Ճշմարիտ: Սրբուհի մը:
- Վրէժխնդիր: Անձնական դերանուն:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 374)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	պ	տ	ր	ա	ն	ք		ե	ր	ա	զ	
2	ա	ն	ռ	խ				կ	ր	ե	ա	զ
3	զ	ր	ա	ւ	ա	ռ	ա	կ		ա	ր	
4		ա	մ	ա	ր	ա	ն			ա	ր	ն
5		խ		ա	ն	մ	ա		ր	ա	ա	
6	ք		կ	ք	զ	ք	չ			ծ	ա	զ
7	ա	ր	ի	լ	ն	կ				ա	զ	ի
8	ք				հ	ք		ք	ի	ք		
9	բ	ա	հ		ա	ր	կ	ե	ք		ա	
10		յ	զ		ռ	ա	կ	ե	ք	օ		
11	զ	ր	օ	ա	ա	ա	ն	յ	տ			
12	ի	ր	ա	ւ		ա	ր	ա	կ	ա	ն	

ԼՈՒՐԵՐ



ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՂՈՐԹՔ՝ ՀԱՅ ԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔԱՂԵՏՆԵՐՈՒՆ ՆԱԽԱԳԱՂՈՒԹԱՄԲ

Տարիներու ավանդութեան համաձայն, Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնէն ետք, Հայկաի քրիստոնէայ հոգեւոր պետերը եկեղեցիներու միութեան նուիրուած աղօթքի շաբաթ կը կազմակերպեն: Հայ երեք համայնքապետները, նաեւ առանձնաբար, եկեղեցիներու միութեան աղօթքի օր կը յատկացնեն:

Կիրակի, 23 Յունուար 2022-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեշնչան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան իր



մասնակցութիւնը բերաւ հայ երեք համայնքապետներուն նախագահութեամբ կազմակերպուած եկեղեցիներու միութեան աղօթքին, հիւրընկալութեամբ՝ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեանի, մասնակցութեամբ՝ Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արհ. Ս. Պետրոս Արք. Միրիաթեանի, Հայ Աւետարանական «Բեթել» եկեղեցւոյ մէջ:

Աղօթքի շաբթուան բնաբանն էր՝ «Մենք տեսանք Անոր աստղը արեւելքի մէջ եւ եկանք երկրպագելու Իրեն» (Մտ 2.2):

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերակցեին Կրօնական Ժողովի ատենադպիր Հոգշ. Ս. Մանուկ Արք. Պարիխանեան եւ Թեմի քահանայ հայրեր, որոնք հոգեպարար աղօթքներ եւ ավետարանական հատուածներ ընթերցելով իրենց մասնակցութիւնը բերին՝ շեշտելով եկեղեցիներու միութեան կարեւորութիւնը:

Երեք համայնքապետները այս առիթով իրենց պատգամը ուղղեցին հաւատացեալներուն:

Արարողակարգը վերջ գտաւ համայնքապետներու օրհնութեան աղօթքով, որմէ ետք անոնք հանդիպում ունեցան, Վերապատուելիին գրասենեակէն ներս:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՌՅԱՆՅ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Ուրբաթ, 21 Յունուար 2022-ի երեկոյեան ժամը 8:00-ին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը շուրջ երկու ժամ առջանց հանդիպում ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմակալ առաջնորդներուն հետ:

Նորին Սրբութիւնը թեմակալ առաջնորդները տեղեակ պահեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու անոր թեմերուն առնչուած ընդհան-



րական ծրագիրներուն ու կատարուելիք աշխատանքներուն մասին: Ան յատկապէս շեշտեց «Սփիւռքի Տարի»-ին առիթով գործնական նախաձեռնութիւններու դիմելու հրամայականը, ինչպէս նաեւ 1 Յուլիսի Միւռնոսօրինէքին եւ 7-9 Դեկտեմբերին Ազգային Ընդհանուր Ժողովին գծով կատարուելիք նախապատրաստական աշխատանքներուն անհրաժեշտութիւնը: Վեհափառ Հայրապետը նաեւ կատարեց շարք մը յիշեցումներ Կաթողիկոսարան-թեմ յարաբերութեանց ու գործակցութեանց գծով:

ՀԱՄԱՉԱՍՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՀԵՏ՝ «ՍՓԻՒՔԻ ՏԱՐԻԱՆ» ԱՌԻԹՈՎ

Շաբաթ, 22 Յունուար 2022-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեշնչան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան հանդիպում ունեցաւ Համազգայինի Հայագիտական Հիմնարկի վարչութեան, տնօրէնութեան, դասախօսական կազմին եւ երրորդ ու չորրորդ կարգերու ուսանող-



ներուն հետ, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս: Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ ազգային գործիչ, դասախօս տիար Աօ Գաթրճեան եւ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ատենապետ օրդ. Մարալ Տիքալիքեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց Համազգայինի Հայագիտական Հիմնարկի անձնակազմին եւ իր ուրախութիւնը յայտնեց այս հանդիպումին առիթով:

Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ատենապետ օրդ. Մարալ Տիքալիքեան խօսք առնելով ներկայացուց Հայագիտական

հիմնարկին տարած առաքելութիւնը, յատկապէս հայ դպրոցները հայերէն-աւանդ ուսուցիչներով օժտելու դերակատարութիւնը:

Հայագիտական Հիմնարկի տնօրէնուհի օրդ. Սիլվա Ճապաղչուրեան ծանօթացուց հիմնարկի դասախօսական կազմը, ներկայացնելով իւրաքանչիւրին դասաւանդած նիւթը:

Սրբազան հօր հրաւերով, դասախօս դոկտ. Հրոյի Ազեղեան ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին «Սփիւռքի Տարի» հռչակագիրէն հատուածներ, ուր Վեհափառ Հայրապետը խորաթափանց կերպով, տիրող պայմաններու լոյսին տակ սելեռակէտի տակ առած է Սփիւռքի իրավիճակը, դիմագրուած մարտահրաւերները եւ գանոնք դիմակայելու հրամայականը, երբ կը շեշտուի այսօր նաեւ Հայագիտական հիմնարկի եւ նմանօրինակ ձեռնարկներու մասնակցութեան անհրաժեշտութիւնը հայ իրականութենէն ներս:



Մասիս եպիսկոպոս «Սփիւռքի Տարի» հռչակագրի լոյսին տակ ընդգծեց Հայագիտական Հիմնարկին յոյժ կարեւոր դերը հայախօսութեան, հայերէնագիտութեան, արեւմտահայերէնի պահպանման եւ ուսուցիչներու պատրաստութեան գործընթացին մէջ: Ան պատուիրեց, որ Վեհափառ Հայրապետին հռչակագիրը հիմնարկի դասարաններէն ներս ընթերցուելով, դասախօսներուն եւ ուսանողներուն միջեւ գրոյցի նիւթ դառնայ եւ համապատասխան առաջարկներ ներկայացնելու լաւագոյն առիթը հանդիսանայ:

Մասիս եպիսկոպոս «Սփիւռքի Տարի» հռչակագրի լոյսին տակ ընդգծեց Հայագիտական Հիմնարկին յոյժ կարեւոր դերը հայախօսութեան, հայերէնագիտութեան, արեւմտահայերէնի պահպանման եւ ուսուցիչներու պատրաստութեան գործընթացին մէջ: Ան պատուիրեց, որ Վեհափառ Հայրապետին հռչակագիրը հիմնարկի դասարաններէն ներս ընթերցուելով, դասախօսներուն եւ ուսանողներուն միջեւ գրոյցի նիւթ դառնայ եւ համապատասխան առաջարկներ ներկայացնելու լաւագոյն առիթը հանդիսանայ:



Սերկաները գրուցեցին հռչակագրի կարեւոր կէտերուն շուրջ:

Սրբազան հայրը դիտել տուաւ, որ հայ մնալը նախ եւ առաջ գիտակցութիւն է, ապա պատասխանատուութիւն եւ համապատասխան աշխատանք կը պահանջէ: Ան օրհնակ բերաւ Սուրիոյ շրջաններու այն հայերը, որոնք թէեւ հայերէն խօսելու դժուարութիւն ունին, սակայն համախմբուելով հայ եկեղեցւոյ, հայ դպրոցին եւ միութիւններուն շուրջ՝ նուիրաբար կը ծառայեն հայ համայնքին եւ ազգին:

Սրբազան հայրը մաղթեց, որ Հայագիտական հիմնարկը իր գործունէութիւնը ծաւալէ ներառելով շրջաններէն ուսանողներ, որպէսզի անոնք եւս հայերէնագիտութեամբ զարգացնեն հայերէն լեզուի գործածութեան իրենց հմտութիւնը:

Այնուհետեւ, միաւորի վարչութեան ատենապետ տիար Յովիկ Ղազարեան անդրադարձաւ Հայագիտական հիմնարկի յառաջիկայ ծրագիրներուն:

Հանդիպումի ավարտին, Մասիս եպիսկոպոս գնահատելով հիմնարկի դասախօսական կազմը, յայտնեց, թէ անոր կատարած աշխատանքը նուիրում է, ի նպաստ մեր ազգային արժեքներու պահպանման:

Սրբազան հայրը բարձր գնահատեց Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, Հայագիտական միաւորի վարչութեան եւ տնօրէնութեան հետեւողական աշխատանքը, յատկապէս գնահատելով հիմնարկին հայակերտումի շարունակուող երթը, հակառակ երկրի տնտեսական եւ առողջապահական դժուար պայմաններուն: